ARMENIA TREE PROJECT
SINCE 1994
«Էյ Թրի Փրի» բարեգործական հիմնադրամ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի վարչական տարածքում անտառապատման աշխատանքների իրականացման

շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

«Արմենիա Թրի Փրոջեքթ»
բարեգործական հիմնադրամի
գործառնական տնօրեն (կնիք,ստորագրություն) Արամ Մովսիսյան

02554563

2026

ARMENIA TREE PROJECT
SINCE 1994
«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեություն	Անտառապատման աշխատանքներ
Նպատակը	Անտառային տարածքների վերականգնում
Պատվիրատու	«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Իրականացնող	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամ (ATP կամ «ԷՅԹԻՓԻ» ՀՄԴ)
Իրականացնողի հասցե	Արշակունյաց փողոց 57/5
Իրականացնողի կոնտակտային տվյալներ	Արա-Փաուլ Բարսամ, Գործադիր տնօրեն +374 10447401
Իրականացման վայր	Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայր
ՇՄԱԳ հաշվետվության կազմում, քարտեզագրություն և խորհրդատվություն	Արման Կանդարյան ԱՁ +37491542709 greenpact2026@gmail.com

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
1.1. Նախատեսվող գործունեության ընդհանուր նկարագիրը 5
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը 6
1.2.1 Նախատեսվող գործունեության համապատասխանությունը օրենքին: 7
1.2.2 ՇՄԱԳ հաշվետվության մշակման մեթոդաբանությունը և տեղեկատվական հիմքերը 8
1.3. Նախատեսվող գործունեության նորմատիվ իրավական հիմքը. 9
1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 11
1.1. Անտառապատման ծրագրի ընդհանուր նկարագիրը 11
2.2. Նախատեսվող անտառատնկման աշխատանքները 11
2.3 Անտառապատման տեխնոլոգիական լուծումները 16
2.4 Անտառտնկարկների խնամքի աշխատանքները 17
2.5 Ցանկապատման աշխատանքները 20
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 22
3.1. Աշխարհագրական դիրքը և տեղադիրքը 22
3.2. Անտառտնկման տեղամասերի տեղադրությունը, ռելիեֆը և երկրաբանական կառուցվածքը 24
3.3. Տեկտոնիկա, սեյսմիկություն, սողանքներ և սելավներ 30
3.4. Կլիմայական պայմանները 32
3.5. Մթնոլորտային օդ 35
3.6. Ջրային ռեսուրսներ 36
3.7. Հողեր 36
3.8 Կենսաբազմազանություն 38
3.8.1 Բուսական աշխարհ 38
3.8.2 Կենդանական աշխարհ 41
3.9 Տարածքի հարևանությամբ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքները Բնության հուշարձաններ 43
4. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 45
4.1. Գեղարքունիքի մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական բնութագիրը 45
5. Նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների վրա 56
5.1. Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա: 56
5.2. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա 57

5.3. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա....60
5.5. Ազդեցությունը կենդանական աշխարհի վրա....62
5.6. Ֆիզիկական ազդեցություններ (աղմուկ և թրթռումներ)....63
5.7 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները....64
5.8 Սոցիալ-տնտեսական ազդեցություն....65
5.9 Թափոնների կառավարում....66
5.10 Արտակարգ իրավիճակներ և վթարային ռիսկերի գնահատում....67
5.11 Պատմամշակութային հուշարձանների վրա ազդեցությունը....68
6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման միջոցառումներ....70
6.1 Բնապահպանական կառավարման պլան....72
6.2 Շրջակա միջավայրի մշտադիտարկման ծրագիր....75
5. Նախատեսվող գործունեության համապատասխանությունը հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին....78
6. Այլընտրանքային տարբերակների գնահատում....80
7.1. Զրոյական տարբերակ (նախատեսվող գործունեության չիրականացում)....80
8. Գրականության ցանկ....81
9. Հավելվածներ....83
Հավելված 1: Հողամասի վկայական....83
Հավելված 2. Գավառ տեղամասի կոորդինատները՝ ARM WGS-84 համակարգով84
Հավելված 3: Պետական միասնական գրանցման քաղվածք....86
Հավելված 4: Տեղեկանք պատմաշկութային օբյեկտների մասին:....88
Հավելված 5: Բուսաբանական հաշվետվություն:....89

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Նախատեսվող գործունեության ընդհանուր նկարագիրը

Սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող անտառապատման աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման, դրանց կանխարգելման, նվազեցման և մեղմացման միջոցառումների ներկայացման նպատակով:

Անտառապատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի կողմից՝ Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի (ԲԾԻԳ) պատվիրակությամբ և համագործակցությամբ:

Սույն հաշվետվությունը մշակվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ծրագրի տարածքի բնապահպանական և սոցիալ-տնտեսական ելակետային պայմանների գնահատումը կատարվել է դաշտային ուսումնասիրությունների, քարտեզագրական և գրական աղբյուրների վերլուծության, ինչպես նաև նախագծի նախաձեռնողի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա:

Հաշվետվությունում ներկայացված են նախատեսվող գործունեության բնութագիրը, ծրագրի իրականացման տարածքի բնական պայմանները, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև նախատեսվող բնապահպանական միջոցառումները և մշտադիտարկման ծրագրերը:

Նախատեսվող անտառապատման ծրագիրը կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության անտառածածկ տարածքների ընդլայնման, էկոհամակարգերի վերականգնման, կենսաբազմազանության պահպանության, հողերի էրոզիայի կանխարգելման և կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմման տեսանկյունից: Ծրագիրը հանդիսանում է Հայաստանի անտառվերականգնման և անտառածածկույթի ավելացմանն ուղղված նշանակալի նախաձեռնություններից մեկը՝ նպաստելով բնական ռեսուրսների կայուն կառավարմանը և շրջակա միջավայրի պահպանությանը:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Անտառպատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասում: 27.94759 հա մակերեսում անտառապատման աշխատանքների իրականացում նախատեսվում է կատարել 2026 թվականի աշնանը և 2027 թվականի գարնանը:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել տարածքի անտառածածկույթի ավելացմանը, էկոհամակարգերի վերականգնմանը, հողերի դեգրադացիայի և էրոզիոն գործընթացների կանխարգելմանը, կենսաբազմազանության պահպանությանը, ինչպես նաև կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը:

Անտառապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Գավառ բնակավայրի հարակից տարածքում:

Քարտեզ 1



Ընտրված տարածքները համայնքային սեփականության հողեր են, որոնք ըստ ԲԾԻԳ-ի, Գավառ համայնք և «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամին ընդհանուր համաձայության հիման վրա 25 տարի ժամկետով անհատույց օգտագործման է հանձնվելու «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամին: Հողամասի նպատակային նշանակության հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության է, իսկ ըստ գործառնական նշանակության՝ արոտավայր, վարելահող (Հավելված 1): Տարածքներն առանձնանում են արոտօգտագործման համեմատաբար ցածր արդյունավետությամբ և սահմանափակ արտադրողականությամբ, ինչի հետևանքով դրանց գյուղատնտեսական օգտագործումը ներկայումս արդյունավետ չէ:

Հաշվի առնելով տարածքների բնական պայմանները, հողերի ներկայիս օգտագործման առանձնահատկությունները և անտառածածկույթի ավելացման անհրաժեշտությունը՝ նշված հողամասերի օգտագործումն անտառապատման նպատակով հիմնավորված է և համապատասխանում է տարածքի բնապահպանական և սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին:

«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի, Գավառ համայնքի հետ ունեցած որոշման համաձայն (հավելված 2), նախատեսում է իրականացնել անտառապատման աշխատանքներ, ինչպես նաև ապահովել 7 տարվա խնամքը: Դրանից հետո կազմակերպությունը մինչև 25 տարի կիրականացնի տարածքների հետխնամքային վերահսկողություն և մշտադիտարկում՝ ապահովելով տնկիների բնականոն զարգացումը և կայուն անտառային էկոհամակարգի ձևավորումը: Ծրագրի ավարտից և նախատեսված աշխատանքների իրականացումից հետո հողամասերը կհանձնվեն Գավառ համայնքին:

1.2.1 Նախատեսվող գործունեության համապատասխանությունը օրենքին:

Սույն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող անտառապատման ծրագրի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (03.05.2023թ. ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի «բ» ենթակետի՝ անտառային տնտեսության բնագավառում իրականացվող «անտառապատում, բացառությամբ անտառային հողերի» գործունեությունը դասակարգվում է որպես «Բ» կատեգորիայի նախատեսվող գործունեություն և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

1.2.2 ՇՄԱԳ հաշվետվության մշակման մեթոդաբանությունը և տեղեկատվական հիմքերը

Սույն ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար հիմք են հանդիսացել «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի կողմից տրամադրված անտառապատման ծրագրի վերաբերյալ նյութերը, նախատեսվող անտառատնկման նախագծային լուծումները, տեղանքի դաշտային ուսումնասիրությունների արդյունքները, տարածքի վերաբերյալ քարտեզագրական և կադաստրային տվյալները, ինչպես նաև հանրային լսումների կազմակերպման նպատակով պատրաստված տեղեկատվական փաթեթը (Հավելված 4)։

Հաշվետվության մշակման ընթացքում օգտագործվել են նաև համապատասխան գրական և տեղեկատվական աղբյուրներ, տարածքի բնական պայմանների, հողային ռեսուրսների, կենսաբազմազանության և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների վերաբերյալ առկա տվյալները, որոնք հնարավորություն են տվել գնահատել նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա։

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենքների և ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան։ Հաշվետվության պատրաստման ընթացքում հիմք են ընդունվել մասնավորապես՝

• «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-150-Ն, 03.05.2023թ.),

• ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի N 438-Ն հրամանով հաստատված «Ռազմավարական էկոլոգիական գնահատման եվ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» հրամանը,

• ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշումը՝ մշտադիտարկումների պլանի կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ,

• անտառային տնտեսության և բնապահպանության ոլորտը կարգավորող գործող իրավական ակտերը, ռազմավարական և ծրագրային փաստաթղթերը։

Նախատեսվող գործունեության իրականացումը համապատասխանում է անտառավերականգնման և անտառապատման ոլորտը կարգավորող իրավական պահանջներին, քանի որ անտառապատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել համայնքային սեփականություն հանդիսացող ոչ անտառային հողերում՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով։

Հաշվետվության մշակման ընթացքում ուսումնասիրվել և վերլուծվել են նախատեսվող գործունեությանը վերաբերող նախագծային նյութերը, տեղանքի դաշտային ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզագրական և կադաստրային տվյալները, ինչպես նաև հանրային լսումների համար պատրաստված տեղեկատվական նյութերը։

1.3. Նախատեսվող գործունեության նորմատիվ իրավական հիմքը.

➢ ՀՀ Սահմանադրություն,

➢ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-150-Ն),

➢«Անտառավերականգնման և անտառապատման իրականացման կարգը սահմանելու մասին» 2024 թվականի մարտի 11-ի N 74-Ն հրաման

➢ ՀՀ հողային օրենսգիրք,

➢ ՀՀ անտառային օրենսգիրք,

➢ ՀՀ ջրային օրենսգիրք,

➢ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք,

➢ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք,

➢ «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք,

➢ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք,

➢ «Թափոնների մասին» ՀՀ օրենք,

➢ «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք,

➢ «Հողօգտագործման հսկողության և պաշտպանության մասին» ՀՀ օրենք,

➢ «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենք,

➢ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշում՝ հանրային ծանուցումների և հանրային լսումների կարգի վերաբերյալ,

➢ «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 71-Ն որոշում,

➢ «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 72-Ն որոշում,

➢ «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 781-Ն որոշում,

➢ «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 967-Ն որոշում,

➢ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի N 438-Ն հրաման։

Նախատեսվող անտառապատման ծրագիրը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք միջազգային բնապահպանական կոնվենցիաների նպատակներին, մասնավորապես՝

• Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.), քանի որ ծրագրի իրականացումը նպաստում է կենսաբազմազանության պահպանությանը, բնական էկոհամակարգերի վերականգնմանը և կենսամիջավայրերի բարելավմանը։

• Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.) և Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.), քանի որ անտառապատման աշխատանքները նպաստում են ածխածնի կլանմանը և կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը։

• Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա, 2000թ.), քանի որ ծրագրի իրականացումը նպաստում է լանդշաֆտների պահպանությանը, վերականգնմանը և բարելավմանը։

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. Անտառապատման ծրագրի ընդհանուր նկարագիրը

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի վարչական տարածքում նախատեսվող անտառապատման աշխատանքները նպատակ ունեն բարելավելու համայնքի էկոլոգիական վիճակը և վերականգնելու երկար տարիների ընթացքում դեգրադացված տարածքները: Նախատեսվող անտառապատման համար ընտրված հողամասերը հիմնականում գերարածեցված, քարքարոտ և գյուղատնտեսական նպատակներով ցածր արդյունավետությամբ օգտագործվող տարածքներ են, որոնք ներկայումս չեն ապահովում հողերի արդյունավետ շահագործում: Անտառապատման արդյունքում ակնկալվում է հողերի էրոզիոն գործընթացների նվազեցում, քամապաշտպան գործառույթի ձևավորում, կենսաբազմազանության վերականգնման և զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում, ինչպես նաև տարածքի լանդշաֆտային և էկոլոգիական կայունության բարձրացում: Նախագծի իրականացումը կնպաստի նաև համայնքի բնական միջավայրի բարելավմանը և երկարաժամկետ հեռանկարում կստեղծի ավելի կայուն ու առողջ էկոհամակարգ:

Նախատեսվող անտառային զանգվածները տվյալ տարածքի համար կունենան կլիմայակարգավորիչ, ջրակուտակիչ, ջրակարգավորիչ, ձնակուտակիչ և քամեպաշտպան նշանակություն: Միաժամանակ, դրանք էական դեր կկատարեն հարակից մշակվող հողերի հակաէրոզիոն պաշտպանության և հողերի դեգրադացիայի կանխարգելման գործում:

Անտառապատման աշխատանքներն իրականացվելու են «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի կողմից՝ Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի (ԲԾԻԳ) պատվիրակությամբ և համագործակցությամբ:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել տարածքի անտառածածկույթի ավելացմանը, հողերի էրոզիոն գործընթացների կանխարգելմանը, բնական էկոհամակարգերի վերականգնմանը, կենսաբազմազանության պահպանությանն ու բարելավմանը, ինչպես նաև կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը: Նախատեսվող անտառապատումը միտված է նաև տարածքի էկոլոգիական կայունության բարձրացմանը, ածխածնի կլանման կարողությունների մեծացմանը և համայնքի շրջակա միջավայրի բարելավմանը:

2.2. Նախատեսվող անտառատնկման աշխատանքները

Անտառապատման նպատակով նախատեսվում է օգտագործել տվյալ տարածաշրջանին բնորոշ և տեղական պայմաններին հարմարված ծառատեսակներ, մասնավորապես՝ սոճի սովորական (*Pinus sylvestris* L.), կաղնի խոշորառէջ (*Quercus macrantera*), թխկի բարձրլեռնային (*Acer trautvetteri.)*, տանձենի

կովկասյան (*Pyrus caucasica*), խնձորենի արևելյան (*Malus orientalis*), կեչի Լիտվինովի (*Betula litwinowii* A. Doluch) և հացենի սովորական (*Fraxinus excelsior* L.):


Անտառապատվող տարածքների համար մշակվել է անտառտնկման համապատասխան սխեմա, որի հիմքում դրված է խառը տեսակային կազմով տնկարկների ձևավորման սկզբունքը: Նման մոտեցումը նպաստում է անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացմանը, հիվանդությունների և փսասատուների նկատմամբ դիմադրողականության մեծացմանը, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանմանը:

Տեսակների տեղաբաշխման և փոխհարաբերությունների պլանավորման ընթացքում հաշվի են առնվել տարածքի հողակլիմայական պայմանները, ռելիեֆի և միկրոռելիեֆի առանձնահատկությունները, լանջերի կողմնադրությունը, ինչպես նաև ընտրված ծառատեսակների կենսաէկոլոգիական առանձնահատկությունները: Արդյունքում նախատեսվում է ձևավորել կենսունակ, էկոլոգիապես կայուն և երկարաժամկետ հեռանկարում ինքնուրույն զարգացող անտառային համակեցություններ:

Տնկանյութի տեսակային կազմը և անտառտնկման սխեման ներկայացված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1

Տնկանյութի տեսակային կազմը և անտառտնկման սխեման



Գ – գլխավոր տեսակներ (սոճի, կաղնի)

Ու – ուղեկցող տեսակներ (կեչի, թղկի, խնձորենի, տանձենի, հացենի)

Տնկանյութի տեսակային կազմը և անտառտնկման համար նախատեսված քանակությունները ներկայացված են աղյուսակ 1-ում, իսկ տնկանյութի հիմնական բնութագրերը՝ աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1

Գավառ բնակավայրի վարչական տարածքում շուրջ 28 հա անտառապատման համար նախատեսված տնկանյութի տեսակային կազմը և քանակությունները

Ծառատեսակների անվանումները	1 հա-ի հաշվով տնկանյութի քանակը/հատ	Նախատեսված տնկայութի ընդհանուր քանակը/հատ
Սոճի սովորական	2000	56000
Կաղնի խոշորառէջ	800	22400
Խնձորենի արևելյան	400	11200
Տանձենի կովկասյան	400	11200
Հացենի սովորական	200	5600
Թխկի բարձրլեռնային	100	2800
Կեչի Լիտվինովի	100	2800
Ընդամենը		**112000**

Աղյուսակ 2

Գավառ բնակավայրի վարչական տարածքում անտառապատման համար նախատեսված տնկանյութի հիմնական բնութագրերը

նախատեսված տնկանյութի հիմնական բնութագրերը

Տնկանյութը ըստ ծառատեսակների	Տարիքը/ տարեկան	Ցողունի բարձրությունը/սմ
Սոճի սովորական	2	25-30
Կաղնի խոշորառէջ	2-3	10-20
Խնձորենի արևելյան	2-3	30-40
Տանձենի կովկասյան	2-3	30-40
Հացենի սովորական	2	30-35
Թխկի բարձրլեռնային	2	40-45
Կեչի Լիտվինովի	2	30-35

Բոլոր տնկիների համար կարևոր նախապայման է հանդիսանում վերգետնյա և ստորգետնյա մասերը լինեն նորմալ համամասնության մեջ, լավ զարգացած և ամբողջական արմատային համակարգով, ներառյալ մազարմատները: Տնկարկներում օգտագործվող ծառատեսակները ինչպես երևում է աղյուսակ 2-ից բաղկացած են՝ ասեղնատերևավորներից և տերևավորներից, որոնցից առաջինը ներկայացնում են՝ սոճի սովորական, իսկ երկրորդ խմբում ներառված են 6 տեսակ՝ կաղնին, հացենի, թխկի, կեչին, խնձորնեին և տանձենին: Տնկարկում ասեղնատերևը տնկվելու է իրար հաջորդող երկու ամբողջական մաքուր շարքերով, այդպիսով՝ այն հանդես է գալիս որպես գլխավոր տեսակներից մեկը: Լայնատերև տեսակներից կաղնին տնկվելու է մեկ ամբողջական մաքուր շարքով, որը նույնպես հանդես է գալիս որպես գլխավոր տեսակ: Մնացած լայնատերև ծառատեսակները, հանդիսանում են որպես ուղեկցող տեսակներ և նախատեսված են տնկել մեկական շարքերով: Ընդհանուր առմամբ, տնկարկի համար նախատեսված է խառը տեսակային կազմ, էկոլոգիական կայունության նկատառումներից ելներով:

Տնկարկի համար ընտրված տարածքների լանջերի թեքության ու կողմնադրության, մակերևույթի ողորկության և քարքարոտության աստիճանի, մայրական ապարների ելքերի առկայության, միկրոռելիֆի ձևի, մեքենահարմարության համապատասխան կատարվում է հողի մշակման և տնկման ագրոտեխնիկական եղանակների ու միջոցների ընտրությունը:

Ընտրված տարածքների այն հատվածներում, որտեղ լանջերի թեքությունը գերազանցում է 15°-ը, անտառատնկման աշխատանքները նախատեսվում է իրականացնել հիմնականում փոսային եղանակով՝ 30–40 սմ տրամագծով և նույն խորությամբ փոսերի պատրաստմամբ: Այն հատվածներում, որտեղ լանջերի թեքությունը մինչև 15° է, նախատեսվում է իրականացնել 30–35 սմ խորությամբ խրամատների անցկացում՝ միմյանցից 2.5 մ միջխրամատային հեռավորությամբ և լանջի թեքությանը ուղղահայաց ուղղությամբ:

Փոսերի և խրամատների պատրաստման եղանակը կընտրվի տեղանքի փաստացի պայմաններից՝ հաշվի առնելով գրունտի քարքարոտության աստիճանը, մակերևույթի ռելիեֆը և աշխատանքների տեխնիկական հասանելիությունը: Համեմատաբար քիչ քարքարոտ և տեխնիկայի համար մատչելի հատվածներում աշխատանքները, անհրաժեշտության դեպքում, կարող են իրականացվել թեթև մեքենայացված տեխնիկական միջոցների կիրառմամբ, իսկ բարձր քարքարոտությամբ, դժվարամատչելի կամ տեխնիկայի շահագործման համար ոչ նպաստավոր տեղամասերում՝ ամբողջությամբ ձեռքով: Ծանր շինարարական տեխնիկայի (էքսկավատորներ, բուլդոզերներ և այլն) կիրառում չի նախատեսվում:

Անտառատնկման սխեման ներկայացված է գծապատկեր 1-ում, իսկ տնկանյութի տեսակային կազմը և քանակները՝ աղյուսակ 1-ում:

Անտառտնկարկներում նախատեսված է իրականացնել խնամքի աշխատանքներ՝ քաղհան-փխրեցում, խոտհունձ, սանիտարական վիճակի հսկողություն: Ընդ որում, քաղհան–փխրեցման կարիք զգացվում է հատկապես խոտաբույսերի աճի շրջանում, իսկ բույսերի ֆիտոսանիտարական վիճակի հսկողություն կիրականացվի վեգետացիայի ամբողջ ընթացքում՝ ժամանակների և հիվանդությունների վերահսկման նպատակով: Հատուկ ուշադրություն կդարձվի նաև

տնկարկների հակահրդեհային անվտանգության ապահովմանը և հրդեհների կանխարգելման միջոցառումների իրականացմանը, մասնավորապես չոր եղանակային պայմաններում և հրդեհավտանգ ժամանակահատվածներում կիրականացվի ուժեղացված հսկողություն՝ հրդեհների առաջացման ռիսկերը նվազեցնելու նպատակով:

2.3 Անտառապատման տեխնոլոգիական լուծումները

Ընդհանուր առմամբ, տնկարկի համար ընտրվել է խառը տեսակային կազմ՝ էկոլոգիական կայունության, կենսաբազմազանության պահպանության և տնկարկի երկարաժամկետ կենսունակության ապահովման նպատակով:

Անտառտնկարկի համար ընտրված տարածքները հիմնականում բնութագրվում են հարթ և մեղմաթեք ռելիեֆով՝ գերակշռող հատվածներում մինչև 10° թեքությամբ, իսկ առանձին հատվածներում լանջերի թեքությունը կազմում է 10.1–20°: Հողի մշակման և տնկման եղանակի ընտրությունը կիրականացվի տեղանքի փաստացի պայմաններից ելնելով՝ հաշվի առնելով լանջերի թեքությունը, մակերևույթի քարքարոտությունը, միկրոռելիեֆը և տեխնիկական հասանելիությունը: Մինչև 15° թեքություն ունեցող և տեխնիկայի համար մատչելի հատվածներում կարող է կիրառվել խրամատային եղանակ՝ 30–35 սմ խորությամբ, 2.5 մ միջխրամատային հեռավորությամբ, իսկ 15°-ից բարձր թեքություն ունեցող, քարքարոտ կամ դժվարամատչելի հատվածներում՝ ձեռքով փոսային եղանակ՝ 30–40 սմ տրամագծով և նույն խորությամբ փոսերի պատրաստմամբ: Ծանր շինարարական տեխնիկայի կիրառում չի նախատեսվում:

Տնկարկում ծառերի խտությունը (միավոր մակերեսում ծառերի թիվը) կախված է անտառտնկման նպատակից: Տվյալ դեպքում տնկումն իրականացվելու է 2.5 մ միջշարքային և 1 մ միջբույսային սխեմայով, որի պարագայում նախատեսվում է ընդհանուր առմամբ 112,000 հատ տնկանյութ, ինչը հեկտարի հաշվով կազմում է 4,000 հատ տնկի:

Տնկումները նախատեսվում է իրականացնել բույսերի վեգետացիոն հանգստի շրջանում:

Բաց արմատային համակարգով աճեցված տնկանյութի տեղափոխումը տնկարանից մինչև տնկման վայր նախատեսվում է իրականացնել հողատորֆային ջրային լուծույթով լցված տարաներով՝ արմատային համակարգի չորացումը կանխելու նպատակով:

Աշնանային տնկումների համար նախատեսված տնկանյութերը աճեցված են փակ արմատային համակարգով, որը նպաստում է տնկիների կպչողականության բարձրացմանը և նվազեցնում է տնկումից հետո չորացման ռիսկը:

2.4 Անտառտնկարկների խնամքի աշխատանքները

Անտառտնկարկներում նախատեսվում է իրականացնել խնամքի աշխատանքներ՝ քաղհան-փխրեցում, խոտհունձ և տնկարկների սանիտարական վիճակի մշտադիտարկում: Քաղհան-փխրեցման անհրաժեշտությունն առավելապես առաջանում է խոտաբույսերի ակտիվ աճի շրջանում, երբ դրանք մրցակցում են տնկիների հետ խոնավության և սննդանյութերի համար: Միաժամանակ, բույսերի ֆիտոսանիտարական վիճակի մշտադիտարկումը կիրականացվի վեգետացիոն շրջանի ընթացքում՝ վնասատուների և հիվանդությունների վաղ հայտնաբերման ու վերահսկման նպատակով: Հատուկ ուշադրություն կդարձվի նաև տնկարկների հակահրդեհային անվտանգության ապահովմանը և հրդեհների կանխարգելման միջոցառումների իրականացմանը, մասնավորապես չոր եղանակային պայմաններում և հրդեհավտանգ ժամանակահատվածներում կիրականացվի ուժեղացված հսկողություն՝ հրդեհների առաջացման ռիսկերը նվազեցնելու նպատակով:

Գավառ բնակավայրի տարածքում ցանկապատման և անտառապատման աշխատանքների ժամանակացույց

Աշխատանքների անվանումը	2026 աշուն	2027 գարուն	2027 աշուն	2028	2029	2030	2031	2032	2032-2051
Տարածքի ցանկապատում	———								
Հողի նախապատրաստում	———	——	——						
Ծառատունկ	———	———	———						
Քաղհան-փխրեցում				———	——	—			
Խոտհունձ				—	—	—	—	—	
Սանիտարական վիճակի մշտադիտարկում			—	———	———	———	———	———	
Անտառտնկարկների ընդհանուր վիճակի մշտադիտարկում									_____

Անտառապատման նպատակով հիմնադրված տարածքներում սերմնաբուսակների խնամքի աշխատանքները կատարվում են **7 տարվա խնամք 2027-2033 թթ.՝**

1-ին տարում՝ տնկում

2-րդ տարում 4 խնամք (1 խոտհունձ, 3 քաղհան-փխրեցում):

3-րդ տարում 3 խնամք (1 խոտհունձ, 2 քաղհան-փխրեցում):

4-րդ տարում 2 խնամք (1 խոտհունձ, 1 քաղհան-փխրեցում):

5-րդ տարում 1 խնամք (1 խոտհունձ)

6-րդ տարում 1 խնամք (1 խոտհունձ)

7-րդ տարում 1 խնամք (1 խոտհունձ)

Նախատեսվող անտառապատման աշխատանքների իրականացման համար կօգտագործվի տարածք տանող առկա դաշտամիջյան ճանապարհը: Նոր ճանապարհների կառուցում կամ առկա ճանապարհի ընդլայնում չի նախատեսվում:

Տնկիների և անհրաժեշտ նյութերի տեղափոխման նպատակով նախատեսվում է օգտագործել հիմնականում 1–2 տրանսպորտային միջոց: Անտառտնկման աշխատանքները կիրականացվեն կարճաժամկետ՝ յուրաքանչյուր տնկման փուլում մոտավորապես 10–15 օրվա ընթացքում՝ կախված եղանակային պայմաններից, աշխատանքների կազմակերպման ընթացքից և ներգրավված աշխատակիցների թվաքանակից:

Հաշվի առնելով տրանսպորտային միջոցների սահմանափակ քանակը և աշխատանքների կարճատև բնույթը՝ առկա դաշտամիջյան ճանապարհի ծանրաբեռնվածության էական ավելացում չի կանխատեսվում: Տրանսպորտային միջոցների տեղաշարժով պայմանավորված հնարավոր ազդեցությունները՝ փոշու և արտանետումների առաջացումը, ինչպես նաև աղմուկը, գնահատվում են որպես աննշան, տեղային և ժամանակավոր:


Առկա ճանապարհի օգտագործումը հնարավորություն կտա խուսափել նոր ճանապարհների կառուցման հետևանքով հողային և բուսական ծածկույթի լրացուցիչ խախտումից՝ նվազագույնի հասցնելով նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

2.5 Ցանկապատման աշխատանքները

Խոշոր և մանր եղջերավոր ընտանի կենդանիների մուտքը անտառապատված տարածք սահմանափակելու նպատակով նախատեսվում է անտառապատվող տարածքների ցանկապատում: Տարածքը ցանկապատվելու է մետաղական փշալարով, որի ընդհանուր երկարությունը կազմում է կազմում է 3534 գծամետր: Փշալարի ամրացման համար միմյանցից 3.5 մ հեռավորությամբ տեղադրվելու են երկաթբետոնե սյուներ, որոնք կամրացվեն քարերով և հողով: Սյուների վրա կձգվեն չորս հորիզոնական և մեկ անկյունագծային փշալարեր:

Ցանկապատման տեխնիկական նկարագիրը ներկայացված է գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2



Նախատեսվող գործունեության իրականացման փուլերը

Նախատեսվող գործունեությունը ներառում է անտառապատման աշխատանքների իրականացման և անտառտնկարկների հետագա պահպանության հետևյալ հիմնական փուլերը՝

1. Տարածքի ցանկապատում: Անտառապատման համար նախատեսված տարածքը կցանկապատվի 3534 գծամետր ընդհանուր երկարությամբ մետաղական փշալարով՝ խոշոր և մանր եղջերավոր ընտանի կենդանիների մուտքը սահմանափակելու և տնկիները արածեցումից պաշտպանելու նպատակով: Ցանկապատման համար կօգտագործվեն երկաթբետոնե սյուներ:

2. Հողի նախապատրաստում: Կախված տեղանքի ռելիեֆից, լանջերի թեքությունից, քարքարոտությունից և տեխնիկական հասանելիությունից՝ հողի նախապատրաստումը կիրականացվի խրամատային կամ ձեռքով փոսային եղանակով: Մինչև 15° թեքությամբ մատչելի հատվածներում նախատեսվում է 30–35 սմ խորությամբ խրամատների պատրաստում՝ 2.5 մ միջխրամատային հեռավորությամբ, իսկ առավել թեք, քարքարոտ և դժվարամատչելի հատվածներում՝ 30–40 սմ տրամագծով և խորությամբ տնկափոսերի պատրաստում:

3. Անտառտնկման աշխատանքներ: Նախատեսվում է տնկել ընդհանուր առմամբ շուրջ 112 000 հատ ասեղնատերև և լայնատերև ծառատեսակների տնկիներ՝ 2.5 մ միջշարքային և 1 մ միջբույսային սխեմայով: Տնկումները կիրականացվեն 2026 թվականի աշնանը, 2027 թվականի գարնանը և աշնանը՝ բույսերի վեգետացիոն հանգստի ժամանակահատվածներում:

4. Անտառտնկարկների խնամք: Նախատեսվում է իրականացնել տնկիների շուրջ հողի քաղհան-փխրեցում, միջշարքային խոտհունձ, սանիտարական վիճակի վերահսկում և անհրաժեշտ պահպանական միջոցառումներ: Խնամքի աշխատանքները նախատեսված են 7 տարվա ընթացքում՝ ըստ նախագծով սահմանված ժամանակացույցի:

5. Տնկիների գույքագրում և լրատնկում: Տնկումից հետո՝ մեկ վեգետացիոն շրջանի ավարտին, կիրականացվի տնկիների կպչողականության և կենսունակության գնահատում ու գույքագրում: 70% կպչողականության արձանագրման դեպքում նախատեսվում է սկզբնական տնկված քանակի 30%-ի չափով լրատնկում՝ չկպած տնկիները փոխարինելու և նախագծային խտությունը վերականգնելու նպատակով:


6. Անտառտնկարկների պահպանություն և մշտադիտարկում: Նախատեսվում է իրականացնել անտառտնկարկների ընդհանուր և սանիտարական վիճակի, տնկիների աճի, կենսունակության, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի պարբերական մասնագիտական դիտարկումներ: Մշտադիտարկման աշխատանքները կիրականացվեն 25 տարվա ընթացքում՝ գնահատելով անտառապատման արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում նախատեսելով լրացուցիչ պահպանական միջոցառումներ:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1. Աշխարհագրական դիրքը և տեղադիրքը

Նախատեսվող անտառապատման տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի վարչական տարածքում: Անտառապատման համար ընտրված հողամասի մակերեսը 27.94759 հա է:

Քարտեզ 2



Նախատեսվող անտառատնկման աշխատանքներն իրականացվելու են Գավառ բնակավայրի վարչական տարածքի բնակավայրի կառուցապատված հատվածից դեպի արևմուտք: Տեղամասը քարտեզում ներկայացված է կանաչ գույնով, իսկ դրա շուրջ նախատեսվող ցանկապատը՝ կարմիր գծանշմամբ:

Քարտեզագրական չափումների համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքի և մոտակա օբյեկտների միջև նվազագույն հեռավորությունները կազմում են
.

- Գավառ բնակավայրի կառուցապատված հատվածից՝ շուրջ 1,190 մ,
- Գավառագետ գետից՝ շուրջ 1,225 մ,
- մոտակա ժամանակավոր կամ սեզոնային ջրահոսքից՝ շուրջ 130 մ,
- քարտեզում նշված մեկ այլ ջրահոսքից՝ շուրջ 690 մ,
- Մ-10 միջպետական նշանակության ավտոճանապարհից՝ շուրջ 4,700 մ,
- «Սևան» ազգային պարկի սահմանագծից՝ շուրջ 5,635 մ,
- Սևանա լճի ափագծից՝ շուրջ 7,610 մ:

Տեղամասի հարակից տարածքով անցնում է նաև Հ-39 հանրապետական նշանակության ավտոճանապարհը: Տեղամասը չի գտնվում «Սևան» ազգային պարկի տարածքում և անմիջական սահմանակցություն չունի ազգային պարկի հետ: Նախատեսվող գործունեության տարածքի և ազգային պարկի սահմանագծի միջև առկա է շուրջ 5.6 կմ հեռավորություն, իսկ Սևանա լճի ափագծից այն հեռու է շուրջ 7.6 կմ:


Տեղամասի սահմանները հատում կամ չեն ընդգրկում այլ բնակավայրերի վարչական տարածքները, ինժեներական ենթակառուցվածքների պահպանության գոտիները կամ հատուկ պահպանվող տարածքներ:

Ընդհանուր առմամբ տեղամասի տեղադիրքը և հարակից օբյեկտների փոխադարձ դասավորվածությունը վկայում են, որ նախատեսվող անտառտնկման աշխատանքները հնարավոր է իրականացնել՝ պահպանելով պատմամշակութային օբյեկտների, բնակելի կառուցապատման, գերեզմանատան և առկա ենթակառուցվածքների նկատմամբ գործող սահմանափակումներն ու անվտանգության պահանջները:

3.2. Անտառտնկման տեղամասերի տեղադրությունը, ռելիեֆը և երկրաբանական կառուցվածքը


Անտառտնկման համար նախատեսված տարածքը գտնվում է 2000-2030 մ բարձրությունների վրա (քարտեզ 3), լանջերը հիմնականում հարթ, մեղմաթեք են և ունեն մինչև 10° թեքություն (քարտեզ 4), իսկ կողմնադրությունները հիմնականում հարավային և հարավ-արևմտյան են (քարտեզ 5)։ Հաշվի առնելով անտառտնկման տեղամասի նշված ռելիեֆային առանձնահատկությունները՝ անտառտնկման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է նախապատվություն տալ տվյալ բնական պայմաններին հարմարված, չորադիմացկուն ծառատեսակների ընտրությանը, ինչպես նաև նախատեսել տնկիների կպչողականության բարձրացմանն ուղղված համապատասխան ագրոտեխնիկական միջոցառումներ (քարտեզ 3)։

Անտառտնկման տեղամասի բարձրությունները ծովի մակարդակից **Քարտեզ 3**




Քարտեզ 4

Անտառտնկման տեղամասի լանջերի թեքությունները



Քարտեզ 5

Անտառտնկման տեղամասի լանջերի կողմնադրությունները




Քարտեզ 6-ում ներկայացված է բուսականության նորմալացված տեղամասերի տարբերության ինդեքսը (NDVI), որը հաշվարկվել է Sentinel-2A արբանյակային պատկերի հիման վրա՝ 2025 թվականի օգոստոս ամսվա համար: NDVI-ը կիրառվել է տեղամասերի բուսածածկի վիճակի, խտության և կենսունակության համեմատական գնահատման նպատակով: Բարձր NDVI արժեքները բնորոշ են առավել զարգացած և ակտիվ բուսածածկ ունեցող հատվածներին, իսկ ցածր արժեքները՝ նոսր բուսածածկով կամ բուսածածկից զուրկ տարածքներին: Իսկ քարտեզ 6-ում ներկայացված է տեղամասերի խոնավության նորմալացված տարբերության ինդեքսը (NDMI), որը նույնպես հաշվարկվել է Sentinel-2A արբանյակային պատկերի հիման վրա՝ 2025 թվականի օգոստոս ամսվա համար: NDMI-ը կիրառվել է տեղամասերի խոնավության պայմանների համեմատական գնահատման նպատակով և արտացոլում է բուսածածկի ու մակերևույթի խոնավության տարածական բաշխվածությունը: Վերոնշյալ ինդեքսները կամ

ցուցիչները բնութագրում են տվյալ ժամանակահատվածի պայմանները և չեն ներկայացնում բազմամյա միջին բնութագրերը։

Քարտեզ 6

Անտառտնկման տեղամասի


բուսականության նորմալացված տարբերության ինդեքսը (NDVI)



Քարտեզ 7

Անտառտնկման տեղամասի բուսածածկի

խոնավության նորմալացված տարբերության ինդեքսը (NDMI)



կլիմայական փոփոխությունները, որի արդյունքում նկատվում է էրոզիոն երևույթներ, հիմնականում անասնատեղափոխման և գեր արածեցված հատվածներում: Անտառպատման համար նախատեսված տարածքներում ծառերը բացակայում են: Կլիմայի փոփոխության պարագայում մարդու անհեռատես գործունեությունը հանգեցնում է բնական էկոհամակարգերի խախտմանը, որի հետևանքով ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակները հարմարվում են և ընդլայնում իրենց արեալները: Սակայն անտառտնկման ընթացքում օգտագործվող ծառատեսակները, որոնք իրենց էկոլոգիական հատկանիշներով կլինեն բնորոշ տվյալ տարածքի բնակլիմայական պայմանների, անշուշտ կնպաստեն տարածքում կենսաբազմազանության վերականգնմանը և զարգացմանը:

Որպես հողօգտագործման առավել արդյունավետ լավ օրինակ, այդ տարածքում անտառային զանգվածի ստեղծումը կարող է լինել նաև կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը մեղմացնելու միջոց: Քանի որ ընտրված

տարածքը հիմնական մասով եզրավորում են մշակովի հողատարածքներ, հետևաբար անտառտնկումն այդ ագրոհամակեցությունների վրա, անշուշտ, բարերար ազդեցություն կունենան: Միաժամանակ, այդ անտառային զանգվածները կարևոր դեր կունենան ընդհանրապես լանդշաֆտներում գործընթացների կայունացման և կառուցվածքա-գործառույթային բաղադրիչների՝ հողածածկի և կենսառեսուրսների պաշտպանության գործում, հատկապես կլիմայական ռիսկերի մեղման և ջրային հաշվեկշռի կարգավորման առումով հատկապես Սևանա լճի և հարակից դաշտավայրերի համար:

Բացի այդ, բնական անտառներից զուրկ Գավառ համայնքի վարչական տարածքի բնական լանդշաֆտներում անտառային զանգվածները կհարստացնեն կառուցվածքային միավորների շարքը, ինչը կլիմայական ռիսկերի առումով լանդշաֆտահարմար հողօգտագործման կարևոր դրսևորում է:

Հայաստանի Հանրապետության տարածքի անտառապատվածության աստիճանը խիստ ցածր է՝ մոտ 11.2 % (ըստ 1993 թվականի անտառների պետական հաշվառման տվյալների): Այդ պակասի բացասական հետևանքները թեև նկատելի են ներկայումս, սակայն առավել արտահայտիչ կլինեն տարեց տարի փոփոխվող կլիմայի պայմաններում: Այս բնապահպանական ռիսկի կառավարումը հանրապետության ողջ տարածքում կենսական կարևորության խնդիր է դառնում: Ինչպես անտառպահպանությունը, անտառբարելավումը և անտառվերականգնումը, այնպես էլ անտառային տարածքների ընդարձակումը՝ անտառապատումը վերածվում է բնապահպանական անվտանգության խնդրի:

Գավառ համայնքը անտառապատվածության առումով համարվում է հանրապետության ցածր անտառածածկ ունեցող համայնք, որտեղ բնական անտառները բացակայում են: Այս ենթատեքստում Գավառ համայնքի տարածքում նախատեսված անտառտնկման աշխատանքների կատարումն այդ պակասը լրացնելու հնարավորություն է:

Հիմնադրվելիք անտառային զանգվածը գտնվելով Սևանա լճի ավազանում կունենան հսկայական ջրակուտակիչ և ջրակարգավորիչ, ձնակուտակիչ, ինչպես նաև տվյալ տարածքի համար կլիմայակարգավորիչ դեր և նշանակություն, իսկ

հարակից մշակողի հողերի համար քամեպաշտպան դերից բացի, կունենա հակաէրոզիոն մեծ նշանակություն:

3.3. Տեկտոնիկա, սեյսմիկություն, սողանքներ և սելավներ

Ուսումնասիրվող տարածքի անմիջական հարևանությամբ խոշոր ակտիվ տեկտոնական խզումներ չեն արձանագրվել: Տարածքի երկրաբանական կառուցվածքը ձևավորվել է տարածաշրջանին բնորոշ տեկտոնական և հրաբխային գործընթացների ազդեցությամբ:

ՀՀ-ն գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում: ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» փաստաթղթի համաձայն՝ Գավառ բնակավայրի տարածքը դասվում է 2-ին սեյսմիկ գոտուն, որի համար գրունտի հորիզոնական արագացման հաշվարկային արժեքը կազմում է a=0.4g:

Տարածքի ռելիեֆային և երկրաբանական պայմանների ուսումնասիրության արդյունքներով անտառապատման համար նախատեսված տեղամասերում ակտիվ սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Միաժամանակ, առանձին հատվածներում մակերևութային հոսքի ազդեցությամբ հնարավոր են թույլ արտահայտված էրոզիոն գործընթացներ, որոնց նվազեցմանը կնպաստի նախատեսվող անտառապատումը:

Տարածքում խոշոր սելավային օջախներ չեն արձանագրվել, սակայն ինտենսիվ տեղումների ժամանակ հնարավոր է ժամանակավոր ջրահոսքերի ձևավորում բնական հեղեղատարներով:




44°0'0"E
45°0'0"E
46°0'0"E
47°0'0"E
41°0'0"N
40°0'0"N
Հավելված 2.
ԱԻ նախարարի «31» 03 2021թ.
թիվ 372-Ա հրամանի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՍԵՅՍՄԻԿ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ
ՔԱՐՏԵԶ
50 ՏԱՐՈՒՄ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ
ԱՐԱԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑՄԱՆ
10% ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
Մասշտաբ 1:500 000
2018
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԱԻ ՆԱԽԱՐԱՐ
Ա. ՓԻԼՈՅԱՆ
«31» 03 2021թ.


3.4. Կլիմայական պայմանները

Կլիմայական տեսակետից ուսումնասիրվող տարածքը բնութագրվում է բարեխառն լեռնային կլիմայով, որը ձևավորվում է տարածքի աշխարհագրական դիրքի, բացարձակ բարձրության և ռելիեֆային առանձնահատկությունների ազդեցությամբ:

Անտառապատման համար նախատեսված տարածքների կլիմայական բնութագրերը ներկայացվում են մոտակա Գավառ օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալների հիման վրա:

Տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտագործվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 15-ի N 03-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 նորմատիվ փաստաթղթում ներկայացված կլիմայական տվյալները, ինչպես նաև ՀՀ Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի հրապարակած տեղեկատվական նյութերը:

Տարածքի կլիմայական պայմանները նպաստավոր են անտառապատման աշխատանքների իրականացման և ընտրված ծառատեսակների բնականոն աճի ու զարգացման համար:



Տարածքի կլիմայական բնութագրերը ներկայացված են մոտակա Գավառ օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալների հիման վրա: Օգտագործված տվյալները արտացոլում են տարածաշրջանի կլիմայական առանձնահատկությունները և հնարավորություն են տալիս գնահատել անտառապատման համար նախատեսված տարածքների բնական պայմանները:

Գավառ օդերևութաբանական կայանի տվյալների համաձայն՝ տարածքը բնութագրվում է չափավոր խոնավ բարեխառն լեռնային կլիմայով: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը կազմում է շուրջ 554 մմ, օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 68 %: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է +35.9°C-ի, իսկ բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -26.3°C-ի:

Տարածքի ջերմաստիճանային ռեժիմը, մթնոլորտային տեղումների քանակը և խոնավության պայմանները ընդհանուր առմամբ նպաստավոր են անտառապատման աշխատանքների իրականացման և ընտրված ծառատեսակների աճի ու զարգացման համար: Տարածքի հիմնական կլիմայական ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակներում՝ ըստ Գավառի օդերևութաբանական կայանի տվյալների:

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, ˚C												Միջին տարեկան, ˚C	Բացարձակ նվազագույն, ˚C	Բացարձակ առավելագույն, ˚C	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
8. Գավառ	-7.3	-6.2	-2.0	4.2	9.1	12.8	15.9	15.9	12.2	6.9	0.7	-4.6	4.8	-33.0	34.1	

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 **Օդի հարաբերական խոնավությունը**

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
8. Գավառ	73	72	71	68	69	70	71	69	68	69	71	73	70	73	62	71	53	


ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 **Մթնոլորտային տեղումները**

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
8. Գավառ	18	20	34	47	72	73	63	46	38	37	28	18	494	118	376
	33	38	52	40	54	56	69	60	74	49	42	44	74		

Քամի

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
10. Գավառ	հունվար	15	6	13	9	14	15	20	8	52	2.1	Արլ	1.1	Արմ	2.0
		1.2	1.1	1.1	2.6	1.9	2.2	2.0	1.8						
	ապրիլ	18	8	20	9	10	11	18	6	63	2.2				
		1.5	1.5	1.3	2.2	2.9	2.5	2.3	1.5						
	հուլիս	35	15	20	7	5	4	6	8	56	1.6				
		1.4	1.2	1.1	1.3	1.5	1.0	1.0	1.2						
	հոկտեմբեր	21	9	14	6	8	10	23	9	54	1.7				
		1.2	1.1	1.0	1.3	1.4	1.5	1.6	1.4						



3.5. Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի որակի մշտադիտարկումն իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ համապատասխան մոնիթորինգային ծրագրերի շրջանակներում:

Անտառապատման համար նախատեսված տարածքում և Գավառ բնակավայրում մթնոլորտային օդի որակի մշտադիտարկման ստացիոնար դիտակայաններ առկա չեն: Տարածքի օդային ավազանի ֆոնային բնութագրերը գնահատվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակած տվյալների հիման վրա:

Տարածքում բացակայում են խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները և մթնոլորտային օդի աղտոտման նշանակալի աղբյուրները: Օդի որակի վրա հիմնական ազդեցությունը կարող են ունենալ բնակավայրերի կենցաղային գործունեությունը, տեղային տրանսպորտային հոսքերը և բնական գործոնները:

Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների գնահատման համար օգտագործվել են ՀՀ բնակավայրերի համար ընդունված ֆոնային կոնցենտրացիաների տվյալները, որոնք հաշվարկվում են բնակավայրերի բնակչության թվաքանակի և տարածաշրջանային առանձնահատկությունների հիման վրա: Համապատասխան ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO2)	Ազոտի երկօքսիդ (NO2)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Հայցվող տարածքներին ամենամոտ բնակավայրը Գավառ քաղաքն է: 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Գավառ քաղաքի մշտական բնակչության թվաքանակը կազմել է շուրջ **18.9 հազար մարդ**, ուստի այն դասվում է **10–50 հազար բնակիչ ունեցող**

բնակավայրերի խմբին: Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից առաջարկվող ֆոնային կոնցենտրացիաների՝ տվյալ խմբի բնակավայրերի համար ընդունվում են հետևյալ արժեքները՝ **փոշի՝ 0.095 մգ/մ³, ածխածնի օքսիդ (CO)՝ 1.1 մգ/մ³, ազոտի երկօքսիդ (NO_2)՝ 0.033 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ (SO_2)՝ 0.006 մգ/մ³**: Նշված ցուցանիշները բնութագրում են տարածքի մթնոլորտային օդի ելակետային (ֆոնային) վիճակը:

3.6. Ջրային ռեսուրսներ

Ուսումնասիրվող տարածքի հիմնական մակերևութային ջրային օբյեկտը Գավառագետ գետն է, որը հանդիսանում է Սևանա լճի ավազանի հիմնական գետերից մեկը: Գետը սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ շուրջ 3050 մ բացարձակ բարձրությունից և թափվում է Սևանա լիճ: Գետի ընդհանուր երկարությունը կազմում է 50 կմ, իսկ ջրհավաք ավազանի մակերեսը՝ մոտ 480 կմ²:

Գավառագետի սնուցումը խառը բնույթի է և ձևավորվում է հիմնականում ձնհալի, մթնոլորտային տեղումների և ստորերկրյա ջրերի հաշվին, որի արդյունքում գետի առավել ջրառատ շրջանը դիտվում է գարնանը, իսկ նվազագույն հոսքը՝ ձմռան ամիսներին:

Անտառապատման համար նախատեսված տեղամասերը գտնվում են Գավառագետ գետի հունից անվտանգ հեռավորության վրա, ինչի շնորհիվ նախատեսվող գործունեության ընթացքում մակերևութային ջրերի վրա անմիջական ազդեցություն չի ակնկալվում:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Գավառագետ գետի վրա իրականացվում են մակերևութային ջրերի որակի մշտադիտարկման աշխատանքներ: Դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ գետի վերին հոսանքում ջրի որակը գնահատվում է որպես «գերազանց» և «լավ», իսկ ստորին հոսանքում՝ բնակավայրերի և գյուղատնտեսական գործունեության ազդեցության պայմաններում, առանձին ցուցանիշներով արձանագրվում են ջրի որակի շեղումներ, որոնց հետևանքով որոշ հատվածներում ջրի որակը գնահատվում է որպես «չափավոր» կամ «անբավարար»:

3.7. Հողեր

Հողը բնական պատմական գոյացություն է, որը ձևավորվում է մայր ապարների, կլիմայի, ռելիեֆի, կենդանի օրգանիզմների և ժամանակի համատեղ ազդեցության արդյունքում: Այն հանդիսանում է կենսոլորտի կարևորագույն բաղադրիչներից մեկը և ապահովում է բուսականության աճի, կենսաբազմազանության պահպանման և էկոհամակարգերի բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանները:

Հողածածկի ձևավորման վրա հիմնական ազդեցություն ունեն աշխարհագրական դիրքը, երկրաբանական կառուցվածքը, ռելիեֆը, կլիմայական պայմանները, բուսական ծածկույթը, ինչպես նաև մարդու տնտեսական գործունեությունը:


Սևահողերը առանձնանում են բարենպաստ ագրոքիմիական և ֆիզիկամեխանիկական հատկություններով: Դրանք բնութագրվում են համեմատաբար բարձր հումուսայնությամբ, չեզոք կամ թույլ հիմնային ռեակցիայով (pH≈6.8–7.5), լավ հատիկային կառուցվածքով, բավարար ջրաֆիզիկական հատկություններով և բարձր բնական բերրիությամբ: Կլանող համալիրում գերակշռում են կալցիումի և մագնեզիումի կատիոնները, որոնք նպաստում են հողի կայուն կառուցվածքի ձևավորմանը և բուսականության բնական զարգացմանը:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքում նախատեսվում են բացառապես անտառապատման աշխատանքներ: Աշխատանքները կկատարվեն ձեռքով՝ տնկիների համար փոսերի փորման միջոցով, առանց ռելիեֆի էական փոփոխության, լայնածավալ հողային աշխատանքների կամ բերրի հողի շերտի հեռացման:

Նախագծով չեն նախատեսվում հողի քիմիական կամ ֆիզիկական հատկությունների փոփոխության հանգեցնող աշխատանքներ, վտանգավոր նյութերի պահեստավորում կամ տեխնոլոգիական գործընթացներ, որոնք կարող են առաջացնել հողի աղտոտում: Ընդհակառակը, անտառապատման արդյունքում երկարաժամկետ հեռանկարում ակնկալվում է հողի էրոզիոն գործընթացների նվազեցում, հումուսային շերտի պահպանություն, ջրաֆիզիկական հատկությունների բարելավում և հողի բերրիության աստիճանական բարձրացում:

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը՝ հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցությունը գնահատվում է որպես աննշան և ժամանակավոր, իսկ ծրագրի իրականացումից հետո ակնկալվում է դրական բնապահպանական ազդեցություն՝ պայմանավորված ծառածածկի ձևավորմամբ և հողերի երկարաժամկետ կայունացմամբ:

Քարտեզ 8



3.8 Կենսաբազմազանություն

3.8.1 Բուսական աշխարհ

Գեղարքունիքի մարզի բուսական աշխարհը բնութագրվում է բարձր տեսակային բազմազանությամբ և պայմանավորված է տարածքի լեռնային ռելիեֆով, բարձրությունների զգալի տատանումներով ու կլիմայական առանձնահատկություններով: Բուսական ծածկույթում գերակշռում են լեռնատափաստանային, ենթալպյան և ալպյան բուսական համակեցությունները, որոնք լայն տարածում ունեն Գեղամա, Վարդենիսի, Սևանի և հարակից լեռնաշղթաների լանջերին: Բարձրադիր գոտիներում ձևավորվել են բնական արոտավայրեր և խոտհարքներ, որոնք ունեն կարևոր էկոլոգիական և տնտեսական նշանակություն:

Սևանա լճի ավազանում առանձնացվում են հստակ արտահայտված բնական գոտիներ՝ լեռնատափաստանային, լեռնանտառային, լեռնամարգագետնային, ենթալպյան և ալպյան: Լեռնանտառային գոտին տարածված է սահմանափակ մակերեսներով՝ հիմնականում Արեգունու, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների առանձին հատվածներում, մինչդեռ առավել մեծ տարածքներ զբաղեցնում են լեռնատափաստանային և բարձրալեռնային մարգագետնային համակեցությունները:

Սևանի ավազանը Հարավային Կովկասի կարևոր ֆլորիստիկական շրջաններից է, որտեղ հաշվառված են շուրջ **1600 անոթավոր բույսերի տեսակներ**: Դրանցից մի մասը Հայաստանի Հանրապետության էնդեմիկ տեսակներ են, իսկ տասնյակ տեսակներ ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում: Բնական բուսականության հետ մեկտեղ տարածքում զգալի դեր ունեն նաև արհեստական անտառատնկարկները, որոնք ստեղծվել են Սևանա լճի ջրի մակարդակի իջեցումից հետո բացված տարածքներում: Այդ տնկարկներում հիմնականում հանդիպում են սոճի, բարդի, ուռենի, ակացիա, հացենի, թեղի և այլ ծառատեսակներ, իսկ թփային բուսականությունում տարածված են չիչխանը, մասրենին, արոսենին, ալոճենին և այլ տեսակներ:

Գեղարքունիքի մարզի տարածքում գտնվում է «Սևան» ազգային պարկը, որի սահմաններում պահպանվում են բնական և կիսաբնական բազմաթիվ էկոհամակարգեր, ինչպես նաև բույսերի զգալի թվով հազվագյուտ, էնդեմիկ և պահպանվող տեսակներ: ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի №72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Կարմիր գրքի համաձայն՝ Գեղարքունիքի մարզում գրանցված են բազմաթիվ պահպանվող բուսատեսակներ, որոնց տարածվածությունը պայմանավորված է համապատասխան կենսամիջավայրերի առկայությամբ: Սակայն դրանց առկայությունը յուրաքանչյուր կոնկրետ տեղամասում պետք է գնահատվի դաշտային հետազոտությունների արդյունքների հիման վրա և չի կարող ենթադրվել միայն մարզային տարածվածության տվյալներով:













Տարածքի հիմնական բուսածածկույթը կազմող բուսատեսակների լուսանկարներ։

Տեղազննության արդյունքներ

Տեղազննումս իրականացվել է դաշտային ակնադիտական եղանակով՝ ուսումնասիրվող տարածքի բուսական աշխարհի ընդհանուր բնութագրման, բուսատեսակների վիզուալ նույնականացման և պահպանվող տեսակների հնարավոր առկայության գնահատման նպատակով:

Ուսումնասիրված տարածքը ներկայացնում է լեռնատափաստանային (տափաստանացած մարգագետնային) էկոհամակարգ՝ քարքարոտ, թույլ թեքությամբ մակերևույթով: Հողատարածքը բնութագրվում է ցածր և միջին բարձրության խոտածածկույթով, առանձին ցրված քարերով և տեղ-տեղ թույլ արտահայտված էրոզացված հատվածներով: Բուսածածկույթը համեմատաբար համաչափ է, սակայն առանձնապես խիտ չէ, իսկ բուսական համակեցություններում գերակշռում են հացազգիների և տարբեր երկշաքիլավոր խոտաբույսերի ներկայացուցիչները, որոնք տեղազննության պահին գտնվել են ակտիվ վեգետացիայի և ծաղկման փուլում:

Տեղամասը գտնվում է լեռնատափաստանային-մարգագետնային գոտում, որտեղ ձևավորված է տվյալ բնական պայմաններին բնորոշ բազմամյա և միամյա խոտաբույսերի համակեցություն: Բուսածածկույթում գերակշռում են հացազգիների (Poaceae), խորդենազգիների (Geraniaceae), խաչածաղկազգիների (Brassicaceae), շրթնածաղկավորների (Lamiaceae), աստղածաղկավորների (Asteraceae) և վարդազգիների (Rosaceae) ընտանիքների ներկայացուցիչները:

Դաշտային ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են անմոռուկ (*Myosotis* sp.), խտածաղիկ (*Erysimum* sp.), սովորական քթանիկ (*Linaria genistifolia*), դառնախոտ (*Salvia verticillata*), տատասկ (*Cirsium* sp.), խնկածաղիկ (*Potentilla* sp.):

Արձանագրված բուսատեսակները բնորոշ են Հայաստանի լեռնատափաստանային էկոհամակարգերին և ունեն լայն տարածվածություն: Տեղազննության ընթացքում ուսումնասիրված տարածքում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակներ չեն արձանագրվել: Հաշվի առնելով ծրագրի բնույթը, տարածքի սահմանափակ զբաղեցման մակերեսը և տեղամասում հազվագյուտ կամ պահպանվող բուսատեսակների բացակայությունը՝ նախատեսվող գործունեության արդյունքում բուսական աշխարհի վրա էական բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում՝ բնապահպանական նախատեսվող միջոցառումների պատշաճ իրականացման պայմաններում:

3.8.2 Կենդանական աշխարհ

Տեղամասը գտնվում է Գեղարքունիքի մարզին բնորոշ լեռնատափաստանային-մարգագետնային գոտում, որտեղ ձևավորված են տվյալ բնական պայմաններին բնորոշ կենդանական համակեցություններ: Տարածքը կարող է ծառայել որպես կենսամիջավայր լեռնատափաստանային էկոհամակարգերին բնորոշ մի շարք կաթնասունների, թռչունների, սողունների և անողնաշարավորների համար:

Հնարավոր կենդանական աշխարհը ներկայացված է հիմնականում մանր և միջին չափերի կաթնասուններով, բաց տարածքներին բնորոշ թռչնատեսակներով,

սողուններով և բազմազան անողնաշարավորներով։ Տարածքի խոտածածկույթը և ծաղկավոր բուսականությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում տարբեր միջատների, մասնավորապես՝ մեղվակերպերի, թիթեռների, մորեխազգիների և բզեզների տարածման համար։

Դաշտային տեղազննությունն իրականացվել է ակնադիտական եղանակով՝ կենդանական աշխարհի ընդհանուր բնութագրման, կենդանատեսակների անմիջական դիտարկման և պահպանվող տեսակների հնարավոր առկայության գնահատման նպատակով։ Տեղազննության ընթացքում խոշոր կաթնասունների, թռչունների, սողունների կամ երկկենցաղների անմիջական դիտարկումներ չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է ինչպես հետազոտության անցկացման ցերեկային ժամերով, այնպես էլ կենդանիների վարքագծային առանձնահատկություններով։ Ուսումնասիրված տարածքում արձանագրվել են միայն անողնաշարավորներ՝ հիմնականում մորեխազգիների (Orthoptera) ներկայացուցիչներ, որոնք բնորոշ են Հայաստանի լեռնատափաստանային մարգագետնային էկոհամակարգերին։

Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակներ կամ դրանց կենսամիջավայրեր չեն արձանագրվել։ Հաշվի առնելով տարածքի բնութագիրը և իրականացված դիտարկումների արդյունքները՝ ուսումնասիրված տեղամասը չի հանդիսանում հազվագյուտ կամ պահպանվող կենդանատեսակների բազմացման, բնադրման կամ մշտական ապրելավայր։

3.9 Տարածքի հարևանությամբ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքները

Բնության հուշարձաններ

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի №967-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկում Գեղարքունիքի մարզի տարածքում հաշվառված են երկրաբանական, ջրաերկրաբանական և կենսաբանական բնության բազմաթիվ հուշարձաններ: Դրանց շարքում առանձնանում են Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների հրաբխային գոյացությունները, օֆիոլիտային և կրաքարային ապարների մերկացումները, էյուվիալ քարացրոնները, գետերի կիրճերն ու տաշտակաձև հովիտները, հանքային և քաղցրահամ աղբյուրները, ինչպես նաև բնական անտառային, ճահճային և մարգագետնային էկոհամակարգերը: Դրանցից առավել հայտնի են Աժդահակ, Կարմրասար և Սպիտակասար հրաբխային գագաթները, Արտանիշի թերակղզու կրաքարային մերկացումները, Շորժայի շրջակայքի օֆիոլիտային ապարները, ինչպես նաև Գավառի, Լիճքի, Երանոսի, Կարճաղբյուրի և Հացառատի հանքային ու խմելու ջրերի աղբյուրները:

Ուսումնասիրված տարածքի և հարակից շրջակայքի վերլուծության, քարտեզագրական նյութերի ուսումնասիրության և իրականացված տեղազննության արդյունքների համաձայն՝ ծրագրի իրականացման տարածքում կամ դրա անմիջական ազդեցության գոտում ՀՀ կառավարության №967-Ն որոշմամբ սահմանված բնության հուշարձաններ չեն գտնվում: Նախատեսվող գործունեությունը չի առնչվում բնության հուշարձանների պահպանության հատուկ ռեժիմ ունեցող տարածքների հետ և չի նախատեսում այնպիսի աշխատանքներ, որոնք կարող են հանգեցնել բնության հուշարձանների ճմաման կամ դրանց բնական վիճակի փոփոխության:

Հայաստանի Հանրապետության «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի համաձայն՝ բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ) ներառում են պետական արգելոցները, ազգային պարկերը, պետական արգելավայրերը և բնության հուշարձանները, որոնց հիմնական նպատակն է բնական էկոհամակարգերի, կենսաբազմազանության, հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող բուսատեսակների ու կենդանատեսակների, ինչպես նաև առանձնահատուկ գիտական, գեղագիտական և բնապահպանական արժեք ներկայացնող բնական համալիրների պահպանությունը:

Տարածքին ամենամոտ գտվող Բնության հուշարձաններից փաստագրվում են երկուսը որոնք ջրաերկրաբանական հուշարձաններ են և բուն անտառապատման տարածից դուրս են գտնվում:

Ջրաերկրաբանական հուշարձաններ

5.	«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
6.	«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում

«Սևան» ազգային պարկը Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքներից է, որը ստեղծվել է 1978 թվականին և գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի ավազանի սահմաններում: Ազգային պարկի հիմնական նպատակն է Սևանա լճի և դրա ավազանի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև բնության և պատմամշակութային ժառանգության պահպանությունը, վերականգնումը և կայուն օգտագործումը:

«Սևան» ազգային պարկի տարածքը ներառում է արգելոցային, արգելավայրային, ռեկրեացիոն և տնտեսական գոտիներ, որոնցում սահմանված են բնապահպանական հատուկ ռեժիմներ՝ համաձայն գործող օրենսդրության:

Քարտեզագրական նյութերի ուսումնասիրության համաձայն՝ նախատեսվող անտառապատման ծրագրի տարածքը գտնվում է **«Սևան» ազգային պարկի սահմանից մոտ 5.6 կմ հեռավորության վրա** և չի ընդգրկվում ազգային պարկի կամ դրա գործառնական գոտիների սահմաններում: Հետևաբար, նախատեսվող գործունեությունն անմիջական ազդեցություն չի ունենա ազգային պարկի պահպանության առարկաների, բնական էկոհամակարգերի, կենսաբազմազանության կամ պահպանվող լանդշաֆտների վրա:

Հաշվի առնելով ծրագրի բնույթը, աշխատանքների սահմանափակ տարածքային ընդգրկումը և ազգային պարկից բավարար հեռավորությունը՝ «Սևան» ազգային պարկի վրա էական բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում՝ նախատեսված բնապահպանական միջոցառումների պատշաճ իրականացման պայմաններում:

4. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Գեղարքունիքի մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական բնութագիրը

Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևելյան հատվածում և տարածքով շրջապատում է Սևանա լիճը: Հյուսիսից սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ Ադրբեջանի Հանրապետությանը, հարավից՝ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ Արարատի մարզին, իսկ արևմուտքից՝ Կոտայքի մարզին: Մարզի վարչական կենտրոնը Գավառ քաղաքն է:

Մարզի տարածքը բնութագրվում է լեռնային ռելիեֆով և ընդգրկում է Սևանի միջլեռնային գոգավորությունը, ինչպես նաև Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների զգալի հատվածները: Ամենաբարձր գագաթը Աժդահակն է (3597 մ), իսկ մարզի գլխավոր ջրային ռեսուրսը Սևանա լիճն է, որը Հարավային Կովկասի խոշորագույն քաղցրահամ լիճն է և Հայաստանի ռազմավարական նշանակության բնական ռեսուրսներից մեկը: Մարզի հիմնական գետերն են Գավառագետը, Արգիճին, Մասրիկը և մի շարք այլ գետեր, որոնք թափվում են Սևանա լիճ: Սևանա լիճը վճռորոշ նշանակություն ունի մարզի էկոլոգիական հավասարակշռության, ջրային տնտեսության, ձկնաբուծության, գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան» ազգային պարկը, որը Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներից մեկն է և կարևոր դեր ունի Սևանա լճի ու դրա ավազանի բնական էկոհամակարգերի, կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության գործում:

2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Գեղարքունիքի մարզի մշտական բնակչությունը կազմել է շուրջ **215.7 հազար մարդ**, որից **68.7 հազարը քաղաքային**, իսկ **147.0 հազարը՝ գյուղական բնակչություն**: Գավառ համայնքի մշտական բնակչությունը կազմել է շուրջ **49.2 հազար մարդ**, այդ թվում՝ **18.9 հազար քաղաքային** և **30.3 հազար գյուղական բնակչություն**:

Գեղարքունիքի մարզի տնտեսության հիմնական ճյուղերն են գյուղատնտեսությունը, անասնապահությունը, ձկնաբուծությունը, սննդի վերամշակող արդյունաբերությունը, հանքարդյունաբերությունը և զբոսաշրջությունը: Գյուղատնտեսության ոլորտում գերակշռում են կարտոֆիլի, հացահատիկային մշակաբույսերի, բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությունը, ինչպես նաև կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունը: Վերջին տարիներին մարզում աստիճանաբար զարգանում են նաև ծառայությունների ոլորտը, վերականգնվող էներգետիկան և զբոսաշրջային ենթակառուցվածքները՝ պայմանավորված Սևանա լճի ափամերձ գոտու զբոսաշրջային ներուժով:

Գավառ համայնքը մարզի վարչական, կրթական և սպասարկման կարևոր կենտրոններից է: Համայնքում գործում են պետական և մասնավոր կրթական, առողջապահական, մշակութային և սոցիալական հաստատություններ, ինչպես նաև սննդի վերամշակման, հանքային ջրերի արտադրության, թեթև արդյունաբերության և այլ ոլորտների փոքր ու միջին ձեռնարկություններ: Համայնքի տնտեսության մեջ

կարևոր դեր ունեն նաև գյուղատնտեսությունը, անասնապահությունը և տեղական արտադրությունը, որոնք հանդիսանում են բնակչության զբաղվածության հիմնական ուղղություններից:

Գավառ համայնքը հարուստ է նաև պատմամշակութային ժառանգությամբ: Համայնքի տարածքում պահպանվել են մի շարք պատմական և ճարտարապետական հուշարձաններ, այդ թվում՝ Սուրբ Աստվածածին, Սուրբ Կարապետ և Հացառատի Սուրբ Աստվածածին եկեղեցիները, ինչպես նաև այլ պատմամշակութային արժեքներ, որոնք ունեն զբոսաշրջային և մշակութային նշանակություն:

Մարզը բնութագրվում է նաև արևային էներգիայի օգտագործման բարենպաստ պայմաններով: Արևափայլի տարեկան տևողությունը կազմում է շուրջ **2500 ժամ**, իսկ արևային ճառագայթման մակարդակը նպաստավոր է վերականգնվող էներգետիկայի, մասնավորապես՝ ֆոտովոլտային համակարգերի զարգացման համար:



Քարտեզ 9. Գեղարքունիքի մարզ:

Գավառ բնակավայրի բնութագիր:

Գավառ քաղաքը Գեղարքունիքի մարզի վարչական, կրթական և մշակութային կետնրոնն է: Ներկայիս Գավառ /տարբեր ժամանակներում՝ Նոր Բայազետ, Կամո/ քաղաքի և նրա շրջակա գյուղերի բնակիչների մեծ մասը վերաբնակեցվել են հին Բայազետից, որը պատմական Հայաստանի հիշարժան բնակավայրերից մեկն էր՝ իր բերդով, եկեղեցիներով, սրբավայրերով, հերոսական անցյալով: Գավառ քաղաքն, ինչպես նաև իր տարածաշրջանը, ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի», մտել է Մեծ Հայքի Սյունիքի նահանգի մեջ: Գավառ քաղաքի բնակատեղին գոյություն է ունեցել մ.թ.ա. 8-րդ դարում: Քաղաքը հիմնադրվել է Ուրարտական թագավոր Ռուսա

1-ի կողմից /մ.թ.ա. 735-713թթ./, որի ապացույցն է Գավառի «Դարի գլուխ» կոչված դամբարանադաշտում հայտնաբերված մ.թ.ա. 732թ. սեպագիր արձանագրությունը: Հնագիտական պեղումներից պարզվեց, որ այս տարածքը մ.թ.ա. 2-1 հազարամյակից եղել է բնակեցված: Քաղաքը բնակեցված է եղել նաև Արշակունիների թագավորության ժամանակահատվածում /66-428թթ./: Գաղթական բայազետցիները Գավառ պատմական ավանի տեղում 1830թ. հիմնեցին Նոր Բայազետ բնակավայրը: Գավառը 1830թ. դառնում է Հայաստանի կարևոր տնտեսական կենտրոններից մեկը, իսկ 1960 – 1991թթ. քաղաքում կառուցվեցին բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, փողոցները ասֆալտապատվեցին և լուսավորվեցին, կառուցվեցին բազմաթիվ բազմաբնակարան շենքեր, բարելավվեց ժողովրդի կենսամակարդակը: ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 9-ի №80-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի համաձայն՝ Գավառ քաղաքի վարչական տարածքում հաշվառված են պատմության և մշակույթի բազմաթիվ անշարժ հուշարձաններ, որոնք ներկայացնում են տարբեր պատմական ժամանակաշրջանների ճարտարապետական, հնագիտական, պատմական և մշակութային արժեքներ: Դրանց շարքում ընդգրկված են եկեղեցիներ, մատուռներ, բնակելի և հասարակական նշանակության պատմական շենքեր, հուշարձաններ, խաչքարեր, հուշակոթողներ և այլ մշակութային ժառանգության օբյեկտներ: Գավառ քաղաքի տարածքում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարը)			Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական, տեղական	Ծանոթագրություն
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԱՄՐՈՑ «ԱՂԻ ԳՅՈԼ»	մթա 2-1 հզմ, 10-17-րդ դդ.	5 կմ ամ	Հ	Գեղամա լեռների հս ստորոտին
	1.1.			գյուղատեղի «Աղի գյոլ»	10-17-րդ դդ.	5 կմ ամ	Տ	
		1.1.1.		եկեղեցի	13-14-րդ դդ.		Տ	գյուղատեղի՝ կնտ-ում, բլրի գագաթին, ավերված
		1.1.2.		ջրաղաց	13-14-րդ դդ.		Տ	ջրամբարից հս՝ ավերված
		1.1.3.		ջրամբար	մթա 2-1 հզմ		Հ	մեծ ջրբաժանում
2.				ԱՄՐՈՑ «ԴԱՐԻ ԳԼՈՒԽ» («ԲԵՐԴԻ ԳԼՈՒԽ»)	մթա 2-1 հզմ	հս-աե մասում	Հ	
	2.1.			գերեզմանոց «Դարի գլուխ»	15-20-րդ դդ.		Տ	
		2.1.1		մատուռ ս. Ստեփանոս	1374 թ.		Տ	պատվիրատու՝ Ամիր Վահապ
			2.1.1.1.	խաչքար՝ Ավագի	14-15-րդ դդ.		Հ	բեմի ճակատին
			2.1.1.2.	խաչքար՝ Մարգարի	15-րդ դ.		Հ	բեմի ճակատին
			2.1.1.3.	խաչքար	15-րդ դ.		Հ	բեմի ճակատին
			2.1.1.4.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	բեմի ճակատին, քիվն՝ արձանագիր
			2.1.1.5.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	բեմի ճակատին
			2.1.1.6.	խաչքար Շամամի	1537 թ.		Հ	մատուռի հվ պատին, մուտքից վեր

			2.1.1.7.	խաչքար	16-րդ դ.		Հ	ագուցված հվ պատին, վերին ձախ անկյունը՝ կոտրված
			2.1.1.8.	խաչքար	16-րդ դ.		Հ	հվ պատին, մուտքից աջ
			2.1.1.9.	խաչքար Թամամի	16-17-րդ դդ.		Հ	ագուցված խորանի ձախ կողմում
			2.1.1.10	խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված խորանից աջ
			2.1.1.11	խաչքար Մարգարի	16-17-րդ դդ.		Հ	բեմի ճակատին
			2.1.1.12	խաչքար Մարգարի	17-րդ դ.		Հ	մատուռի բեմի ճակատին
			2.1.1.13	խաչքար	17-րդ դ.		Հ	ագուցված բեմին
			2.1.1.14	խաչքար Կիրակոսի	17-րդ դ.		Հ	բեմի ճակատին
		2.1.2		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	ամ մասում, մամռապատ
		2.1.3		խաչքար	10-11-րդ դդ.		Հ	ընդհանուր պատվանդանին, կողքի խաչքարը չի պահպանվել
		2.1.4		խաչքար՝ Մարգարիտի	12-13-րդ դդ.		Հ	
		2.1.5		խաչքար	13դ.		Հ	ս. Ստեփանոս մատուռից հվ, երկաստիճան պատվանդանին, որին մատուռի կառուցման շինարարական արձանագրությունը
		2.1.6		խաչքար Խաս Խաթունի, Դուժի և Հեղինի	1451 թ.		Հ	ամ մասում, ընկած գետնին
		2.1.7		խաչքար Սուրմա խաթունի	15-16-րդ դդ.		Հ	ընդհանուր պատվանդանին կանգնեցված խաչքարերից աջակողմյանը
		2.1.8		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	մատուռից 10 մ ամ
		2.1.9		խաչքար՝ Ստեփանոս եպիսկոպոսի	1513 թ.		Հ	ս. Ստեփանոս մատուռից հվ
		2.1.10.		խաչքար՝ Աղուպշի, Ուսէբի, Աբրահամի	1516 թ.		Հ	պատվանդանին
		2.1.11.		խաչքար՝ Գալուստի, Խաթուն Խասի և այլոց	1521 թ.		Հ	ամ մասում, բարձր պատվանդանին
		2.1.12.		խաչքար՝ Ղուլիջանի	1524 թ.		Հ	պատվանդանին
		2.1.13.		խաչքար	1530 թ.		Հ	խրված հողի մեջ
		2.1.14.		խաչքար՝ Գոհարի	1531 թ.		Հ	ամ մասում, բարձր պատվանդանին
		2.1.15.		խաչքար՝ Գուսթանի	1531 թ.		Հ	ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից ձախակողմյանը
		2.1.16.		խաչքար՝ Շահամելիքի	1531 թ.			
		2.1.17.		խաչքար՝ Շահսուլթանի	1534 թ.		Հ	ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը
		2.1.18.		խաչքար՝ Շաղուպաթաղի	1534 թ.		Հ	ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը
		2.1.19.		խաչքար՝ Սարգսի և այլոց	1534 թ.		Հ	ամ մասում, բարձր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից ձախակողմյանը
		2.1.20.		խաչքար՝ Մաթէոս քահանայի	1534 թ.		Հ	ամ մասում, բարձր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը
		2.1.21.		խաչքար՝ Գրիգոր աբեղայի	1534 թ.		Հ	իրար կողք կանգնեցված 3 խաչքարերից կենտրոնինը
		2.1.22.		խաչքար՝ Վելարի, Միրանշի և Եղիսաբեթի	1535 թ.		Հ	աե մասում, պատվանդանին
		2.1.23.		խաչքար՝ Սուլթանի, Մարանի	1536 թ.		Հ	աե մասում, պատվանդանին
		2.1.24.		խաչքար՝ Ստեփանոսի և Պետրոսի	1536 թ.		Հ	պատվանդանին
		2.1.25.		խաչքար՝ Չիչաքի, Մխիթարի, Շամամի ...	1536 թ.		Հ	աե մասում, պատվանդանին, եզրերը կոտրված
		2.1.26.		խաչքար՝ Ղարիպշի, պարոն Խաթունի ...	1537 թ.		Հ	միջնամասում, ընդհանուր պատվանդանին

								կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը
		2.1.27.		խաչքար՝ Ովանես իրիցի	1551 թ.		Հ	մատուռից հվ
		2.1.28.		խաչքար՝ պարոն Աստվածատուրի	1577 թ.		Հ	պատվանդանին
		2.1.29.		խաչքար՝ Աթանի	16-րդ դ.		Հ	հենած պատվանդանին
		2.1.30.		խաչքար՝ Աբրահամի	16-րդ դ.		Հ	ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից ձախակողմյանը
		2.1.31.		խաչքար՝ Քաղպէկի	16-րդ դ.		Հ	ընդհանուր պատվանդանին կանգնեցված խաչքարերից աջակողմյանը
		2.1.32.		խաչքար	16-րդ դ.		Հ	ս. Ստեփանոս մատուռից հվ
		2.1.33.		խաչքար՝ Եղիս աբեղայի	16-րդ դ.		Հ	իրար կողք կանգնեցված 3 խաչքարերից աջակողմյանը
		2.1.34.		խաչքար	16-րդ դ.		Հ	արձանագիր, ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը
		2.1.35.		խաչքար՝ Եսայի, Մարմելիքի, Պողոսի և այլոց	16-րդ դ.		Հ	
		2.1.36.		խաչքար՝ Դետա Խաթունի	16-րդ դ.		Հ	ամ մասում, երկատված, բեկորները իրար վրա
		2.1.37.		խաչքար՝ Ութանեսի	16-17-րդ դդ.		Հ	կոտրված, բեկորներն՝ իրար կողքի
		2.1.38.		խաչքար՝ Խանաղի	16-17-րդ դդ.		Հ	ամ մասում, երկատված, բեկորներն իրար վրա, մամռապատ
		2.1.39.		խաչքար՝ Խոսրովին, Մարիանին	16-17-րդ դդ.		Հ	հվ մասում, պատվանդանին
		2.1.40.		խաչքար՝ Տիլիճանի	16-17-րդ դդ.		Հ	ընդհանուր պատվանդանին կանգնեցված խաչքարերից ձախակողմյանը
		2.1.41.		խաչքար՝ Շահնազարի	16-17-րդ դդ.		Հ	պատվանդանին
		2.1.42.		խաչքար՝ Իսախանի	1707 թ.		Հ	ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից աջակողմյանը կազմող՝ Ավանէս
		2.1.43.		խաչքար՝ Գրիգորի և Սառա խաթունի	1707 թ.		Հ	ընդհանուր պատվանդանին կանգնեցված զույգ խաչքարերից ձախակողմյանը կազմող՝ Ավանէս
3.				ԱՄՐՈՑ «ԺԱՄԻ ԴԱՐ»	մթա 2-1 հզմ, 16-20-րդ դդ.	ամ մասում	Հ	Արծվաքար թաղամասի հվ եզրին, Գավառագետի աջափնյա բարձր սարահարթի աե եզրին
	3..			դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ		Հ	ամրոցի հվ կողմում
	3..			գերեզմանոց «Ժամի դար»	16-20-րդ դդ.		S	ամրոցի հվ կողմում
			3.2.1	խաչքար	13-րդ դ.		Հ	խիստ մամռապատ
			3.2.2	խաչքար	13-րդ դ.		Հ	մեկ շարքով կանգնած 5 խաչքարերից աջից 1-ինը
			3.2.3	խաչքար	13-րդ դ.		Հ	մեկ շարքով կանգնած 5 խաչքարերից աջից 2-րդը
			3.2.4	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	մեկ շարքով կանգնած 5 խաչքարերից ձախից 2-րդը
			3.2.5	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	մեկ շարքով կանգնած 5 խաչքարերից ձախից 3-րդը
			3.2.6	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	արձանագիր, պահպանվել է կիսով
			3.2.7	խաչքար՝ Ղուկասի	15-16-րդ դդ.		Հ	արձանագիր, վերին և ստորին ձախ անկյունները՝ կոտրված
			3.2.8	խաչքար՝ Հոռումի	15-16-րդ դդ.		Հ	ընկած
			3.2.9	խաչքար	16-17-րդ դդ.		Հ	արձանագիր, ընկած, եզրերը՝ կոտրված
			3.2.10.	խաչքար՝ Ղարամանի	16-17-րդ դդ.		Հ	պատվանդանին
			3.2.11.	խաչքար՝ Իվանեի	16-17-րդ դդ.		Հ	վերին ձախ անկյունը կոտրված

			3.2.12.	խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ընկած
			3.2.13.	տապանաքար Խանտազարի	1671 թ.		S	
4.				ԱՄՐՈՑ «ԺԱՆԳՈՅԻ ԱՂԸԼ»	մթա 2-1 հզմ	5 կմ հս-ամ	Հ	«Մեծ քռաներ» վայրում
	4.1.			դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ		Հ	
5.				ԱՄՐՈՑ «ԽԱՉԵՐ»	մթա 2-1 հզմ	ամ մասում	Հ	
	5.1.			դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ		Հ	ամրոցի ամ կողմում
6.				ԱՄՐՈՑ ՀԱՑԱՌԱՏ («ԱՌՆԵՂ», «ԲԵՐԴԻ ԳԼՈՒԽ»)	մթա 2-1 հզմ	ամ մասում		Հացառատ թաղամասի հվ-ամ մասում
	6.1.			դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ		Հ	ամրոցից ամ
7.				ԱՄՐՈՑ «ՂԱՄԼՈՒԽ»	մթա 2-1 հզմ	7 կմ հվ-աե	Հ	Արծվաքար թաղամասից 7 կմ հվ, Սևանա լճի ափին տարածվող 2 ավերակ միջնադարյան գյուղերն իրարից բաժանող բարձրունքին
	7.1.			դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ		Հ	
8.				ԱՄՐՈՑ «ՄՇԿՈՅԻ ԲԵՐԴ»	մթա 2-1 հզմ	4,5 կմ հս-ամ	Հ	«Մշկոյի քռաներ» վայրում, ս. Խաչ մատուռի ճանապարհին
9.				ԱՄՐՈՑ «ՄՈՒԹԸԲԻ ՁՈՐ»	մթա 3-1 հզմ	2 կմ հվ	Հ	Արծվաքար թաղամաս, Մարտունի տանող ճանապարհի ձախ կողմում, Կարմիր գյուղից 50 մ հս
	9.1.			դամբարանադաշտ	մթա 2 հզմ վրջ		Հ	ամրոցի շրջակայքում
10.				ԱՄՐՈՑ «ՅՈՆՋԱԼՈՒԽ»	մթա 2-1 հզմ, 9-17-րդ դդ.	5-6 կմ ամ	Հ	«Գյոզեի կուչ» քարքարոտ բարձրունքին
	10.1.			գյուղատեղի «Յոնջալուխ»	9-17-րդ դդ.		S	
		10.1.1		գերեզմանոց	9-13-րդ դդ.		S	գյուղատեղիի աե մասում
			10.1.1.1.	խաչքար	9-րդ դ.		Հ	կանգնեցված հողի մեջ, մամռապատ
			10.1.1.2.	խաչքար	9-10-րդ դդ.		Հ	կանգնեցված գլխիվայր, երկատված
			10.1.1.3.	խաչքար	9-10-րդ դդ.		Հ	մամռապատ
			10.1.1.4.	խաչքար	10-րդ դ.		Հ	ընկած գետնին, խիստ մամռապատ
			10.1.1.5.	խաչքար	14-15-րդ դդ.		Հ	հենած քարին, մամռապատ
			10.1.1.6.	խաչքար	14-15-րդ դդ.		Հ	կանգնեցված հողի մեջ, եզրերը՝ կոտրված
			10.1.1.7.	խաչքար	14-15-րդ դդ.		Հ	եզրերն ունեն անկանոն կտրվածք, մամռապատ
11.				ԱՄՐՈՑ «ՁԱՂԱՑԻ ԴԱՐ»	մթա 2-1 հզմ	հս մասում	Հ	Արծվաքար թաղամաս, ամ եզրին
	11.1.			դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ		Հ	ամրոցի ամ կողմում
12.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ԱԳԱՐԱԿ («ՄԱՆՈՒՉԱՐԻ ԴՈՂԱԿՆԵՐ»)	13-17-րդ դդ.	5 կմ հվ-աե	Հ	Արծվաքար թաղամասից 4,5 կմ հվ-աե
	12.1.			եկեղեցի	14-15-րդ դդ.		Հ	կիսավեր
		12.1.1.		գավիթ	14-15-րդ դդ.		Հ	
			12.1.1.1.	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	պատվանդանին, մամռապատ
			12.1.1.2.	խաչքար	12-13-րդ դդ.		Հ	կիսով հողի մեջ
			12.1.1.3.	խաչքար	13-րդ դ.		Հ	
			12.1.1.4.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	
			12.1.1.5.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	
	12.2.			եկեղեցի «Ալոյի վանք»	1231 թ.		Հ	գյուղատեղիի վրա իշխող բարձրունքին պատվիրատու՝ Հնայ

		12.2.1.		գերեզմանոց	13-18-րդ դդ.		Հ	եկեղեցու շուրջը
			12.2.1.1.	խաչքար	13-րդ դ.		Հ	եկեղեցու մուտքից աջ, պատվանդան-ներին կանգնած 4 խաչքարերից ձախից 1-ինը
			12.2.1.2.	խաչքար	13-րդ դ.		Հ	եկեղեցու մուտքից աջ, պատվանդան-ներին կանգնած 4 խաչքարերից ձախից 2-րդը
			12.2.1.3.	խաչքար	13-րդ դ.		Հ	եկեղեցու մուտքից աջ, պատվանդան-ներին կանգնած 4 խաչքարերից ձախից 3-րդը
			12.2.1.4.	խաչքար	13-րդ դ.		Հ	եկեղեցու մուտքից աջ, պատվանդան-ներին կանգնած 4 խաչքարերից աջից 1-ինը
			12.2.1.5.	խաչքար	13-րդ դ.		Հ	եկեղեցու մուտքից ձախ
			12.2.1.6.	խաչքար	13-րդ դ.		Հ	եկեղեցու մուտքից ձախ
			12.2.1.7.	խաչքար	14-15-րդ դդ.		Հ	եկեղեցու մուտքից ձախ, պատվանդանին, վերնամասը՝ թեքությամբ կոտրված
			12.2.1.8.	խաչքար	15-16-րդ դդ.		Հ	եկեղեցու մուտքից ձախ
			12.2.1.9.	խաչքար՝ Գոհարի	16-17-րդ դդ.		Հ	եկեղեցուց հս-ամ, ընկած գետնին
	12.3.			գերեզմանոց	13-18-րդ դդ.		S	գյուղատեղիի հվ կողմում
		12.3.1.		խաչքար	10-11-րդ դդ.		Հ	խրված հողի մեջ
		12.3.2.		խաչքար	13-րդ դ.		Հ	հենած ժայռաբեկորին, մամռապատ
		12.3.3.		խաչքար	13-րդ դ.		Հ	խրված հողի մեջ, մամռապատ
		12.3.4.		խաչքար	14-րդ դ.		Հ	գերեզմանոցի աե եզրին, արձանագիր, ընկած գետնին
		12.3.5.		խաչքար	14-15-րդ դդ.		Հ	ընկած գետնին, մամռապատ
		12.3.6.		խաչքար	14-15-րդ դդ.		Հ	գերեզմանոցի հս եզրին, կանգնեցված պատվանդանին
		12.3.7.		խաչքար	14-15-րդ դդ.		Հ	գերեզմանոցի հվ եզրին, երկատված, արձանագիր
		12.3.8.		խաչքար	14-15-րդ դդ.		Հ	գերեզմանոցի աե եզրին, արձանագիր, երկատված, ստորին մասը չի պահպանվել,
		12.3.9.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	գերեզմանոցի աե եզրին, արձանագիր, պատվանդանի մոտ ընկած 3 խաչքարերից ձախակողմյանը
		12.3.10.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	գերեզմանոցի աե եզրին, արձանագիր, պատվանդանի մոտ ընկած 3 խաչքարերից աջակողմյանը
		12.3.11.		խաչքար՝ Միրումի	15-16-րդ դդ.		Հ	գերեզմանոցի աե եզրին, ընկած գետնին
		12.3.12.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	կանգնեցված պատվանդանին
		12.3.13.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ամրացված գետնին
		12.3.14.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	կանգնեցված պատվանդանին
		12.3.15.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	գերեզմանոցի կնտ-ում, երկատված, քիվը՝ ջարդված
		12.3.16.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	գերեզմանոցի կնտ-ում, երկատված
		12.3.17.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	պահպանվել է կիսով, վերին աջ անկյունը կոտրված
		12.3.18.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	կոտրված, պատվանդանին ամրացված է միայն վերնամասը՝, արձանագիր
		12.3.19.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	պատվանդանին, երկթեք ավարտով

		12.3.20.		խաչքար	1536 թ.		Հ	գերեզմանոցի աե եզրին, պատվանդանի մոտ ընկած 3 խաչքարերից կենտրոնինն է
		12.3.21.		խաչքար	16-րդ-րդ դ.		Հ	կանգնեցված բնական մեծ ժայռաբեկորին
		12.3.22.		խաչքար՝ Բարսեղի	16-րդ-րդ դ.		Հ	գերեզմանոցի աե եզրին, ընկած գետնին
		12.3.23.		խաչքար	16-րդ-րդ դ.		Հ	երկթեք ավարտով, կանգնեցված հողի մեջ, մամռապատ
		12.3.24.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	մամռապատ
		12.3.25.		խաչքար՝ Եղումի	16-17-րդ դդ.		Հ	գերեզմանոցի հվ եզրին, ընկած գետնին
		12.3.26.		խաչքար՝ Աղամի և ծնողաց	17-րդ-րդ դ.		Հ	գերեզմանոցի հվ կողմում, մասնատված, կազմող՝ Քիրամ
		12.3.27.		խաչքար՝ Սարգսի	1602 թ.		Հ	երկատված, կանգնեցված պատվանդանին
13.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԴՈԼԱԿՆԵՐ»	13-17-րդ դդ.	աե մասում	S	Արծվաքար թաղամասից 7 կմ հվ-ամ, Գավառ-Մարտունի խճուղուց աջ, գոմերի մոտ
	13.1.			մատուռ «Արծվաթռիչ» («Ղամլուխի ժամ)»	13-14-րդ դդ.		S	վրկնգ՝ 1970-ական թթ.
		13.1.1.		խաչքար	13-րդ-րդ դ.		Հ	ագուցված աե պատին, ներքուստ
		13.1.2.		խաչքար	13-րդ դ.		Հ	ագուցված ամ պատին, մուտքից աջ, արտաքուստ, վերնամասը՝ չի պահ-պանվել
		13.1.3.		խաչքար	13-րդ դ.		Հ	ագուցված աե պատին, ներքուստ
		13.1.4.		խաչքար	13-րդ դ.		Հ	ագուցված աե պատին, ներքուստ
		13.1.5.		խաչքար	13-14-րդ դդ.		Հ	ագուցված աե պատին, ներքուստ
		13.1.6.		խաչքար	14-15-րդ դդ.		Հ	մուտքից աջ, կիսով հողի մեջ
		13.1.7.		խաչքար	14-15-րդ դդ.		Հ	աե պատի մոտ
14.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԽԱՐԱԲԵՔ»	13-18-րդ դդ.	1,5 կմ հվ-ամ	S	Հացառատ թաղամասից 1,5 կմ հվ-ամ Հացառատ - Ծաղկաշեն ճանապարհից աջ
	14.1.			մատուռ	15-րդ դ.		S	ավերված
	14.2.			գերեզմանոց «Խարաբեք»	13-18-րդ դդ.		S	
		14..2.1.		խաչքար	13-րդ դ.		Հ	
		14..2.2.		տապանաքար Գասպարի	1708 թ.		S	
15.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՂԱԶԱՐԻ ՁՈՐ»	13-17-րդ դդ.	5 կմ հվ-աե	S	Արծվաքար թաղամաս, «Սալոյի վանք» եկեղեցուց 1 կմ ամ
	15.1.			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	հենած քարաբեկորին, վերին ձախ անկյունը՝ կոտրված
	15.2.			խաչքար	14-15-րդ դդ.		Հ	
	15.3.			խաչքար	15-16-րդ դդ.		Հ	
16.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՍԱՌՁԼՈՒ»	10-17-րդ դդ.	9 կմ ամ	S	ս. Խաչ սարից 1 կմ հվ-ամ
17.				ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ «ԽԱՐԱԲԻ ԴՈՒԲԱՆ»	մթա 2 հզմ կես	3 կմ հվ	Հ	Հացառատ թաղամաս, Ծաղկաշեն տանող ճանապարհի աջ կողմում
18.				ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ. ՀԱՑԱՌԱՏԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ	7-19-րդ դդ.	հվ-ամ մասում	Հ	Հացառատ թաղամասի կնտ-ում
	18.1.			եկեղեցի ս. Աստվածածին	7-րդ դ.		Հ	
	18.2.			եկեղեցի ս. Գրիգոր Լուսավորիչ	19-րդ դ.		Հ	
		18.2.1.		խաչքար	14-15-րդ դդ.		Հ	ագուցված հվ պատին, պատուհանի բացվածքից աջ

		18.2.2.		խաչքար	15-րդ դ.		Հ	ագուցված բեմի ճակատին՝ գլխիվայր
		18.2.3.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ագուցված հս պատին, մկրտարանի խորշի մոտ, վերին մասը՝ կոտրված
		18.2.4.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ագուցված հվ պատին, վերին և ստորին մասերը՝ տաշված
		18.2.5.		խաչքար	1531 թ.		Հ	ագուցված բեմի ճակատին, վերին մասը՝ տաշված, ստորինը՝ հատած
		18.2.6.		խաչքար	1541 թ.		Հ	ամրացված եկեղեցու հվ պատին՝ 2 մասով
		18.2.7.		խաչքար՝ Ատիպէկի	1546 թ.		Հ	ագուցված հորիզոնական դիրքով հվ պատին, վերին մասը՝ տաշված
		18.2.8.		խաչքար	1550 թ.		Հ	ագուցված հվ պատին, վերին մասի քան-դակները՝ տաշված
		18.2.9.		խաչքար	16-րդ դ.		Հ	ագուցված բեմի ճակատին, վերին և ստորին մասերը՝ հատած
		18.2.10.		խաչքար	16-րդ դ.		Հ	ագուցված բեմի ճակատին, ստորին մասը չի պահպանվել
		18.2.11.		խաչքար	16-րդ դ.		Հ	ագուցված բեմի ճակատին
		18.2.12.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված բեմի ճակատին, վերին մասը՝ տաշված
		18.2.13.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված հվ պատին՝հորիզոնական դիրքով
		18.2.14.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված հվ պատին, վերին և ստորին մասերը՝ հատած
		18.2.15.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված հվ պատին, ստորին մասը՝ տաշված
		18.2.16.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված հվ պատին, մուտքից վեր, վերին և ստորին մասերը՝ տաշված
		18.2.17.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված խորանում՝ հորիզոնական դիրքով
		18.2.18.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված բեմի ճակատին
		18.2.19.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված բեմի ճակատին, քիվը՝ ջարդոտված
		18.2.20.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ագուցված խորանում
	18.3.			գերեզմանոց	13-19-րդ դդ.		Հ	եկեղեցիների շուրջը
		18.3.1.		խաչքար	13-րդ դ.		Հ	ս. Գրիգոր եկեղեցուց հվ, ստորին մասը հատած
		18.3.2.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ս. Գրիգոր եկեղեցուց հվ, ստորին մասը հատած, վերնամասը՝ կոտրված
		18.3.3.		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ս. Աստվածածին եկեղեցուց ամ, կոտրված, հողմնահարված
		18.3.4.		խաչքար	1541 թ.		Հ	ս. Գրիգոր եկեղեցու մոտ, քիվը և ստորին մասը կոտրված
		18.3.5.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	ս. Գրիգոր եկեղեցու մոտ, ընկած գետնին, արձանագիր, ստորին մասը կոտրված
		18.3.6.		խաչքար	16-17-րդ դդ.		Հ	հենած ս. Գրիգոր եկեղեցու հվ պատին, երկատված, ստորին մասը չի պահպանվել
		18.3.7.		տապանաքար	16-17-րդ դդ.		S	մամռապատ, եզրերը կոտրված
		18.3.8.		տապանաքար Ավանէս սարկավագի	16-17-րդ դդ.		S	ս. Աստվածածին եկեղեցու աե պատի մոտ, տեղահանված
19.				ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	19-րդ դ.	հս մասում	S	Արծվաքար թաղամասի ամ եզրին, «Ժամի դար» ամրոցի ստորոտին
	19.1.			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	եկեղեցու մուտքից աջ, ընկած

	19.2.			խաչքար	15-16-րդ դդ.		Հ	եկեղեցու բակում, քիվը՝ կոտրված
	19.3.			գերեզմանոց	15-19-րդ դդ.		S	եկեղեցուց 100 մ հեռու, ձորալանջին
20.				ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	1902-1905 թթ.	կնտ	S	պատվիրատու՝ Խորեն Մուրադբեկյան վրնրգ.՝ 1999թ.
21.				ԵԿԵՂԵՑԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ (Ս. ԿԱՐԱՊԵՏ)	1848թ.	Նալբանդյան փող.	S	հյուրանոցի մոտ
	21.1.			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	հս պատի մոտ, վերին ձախ հատվածը կոտրված
	21.2.			խաչքար	15-րդ դ.		Հ	հս պատի մոտ, մամռապատ
	21.3.			խաչքար՝ Մարմոս եպիսկոպոսի	16դ. 2-րդ կես		Հ	ագուցված աե պատին կազմող՝ Մելիքսեթ
	21.4.			խաչքար՝ Բարեքի	16-17-րդ դդ.		Հ	ամ պատի մոտ, կազմող՝ Քիրամ
22.				խաչքար	9-րդ դ.	հս մասում	Հ	Արծվաքար թաղամասում, Լևիկ Բարսեղյանի տնամերձում գտնվող սրբատեղիի մուտքի մոտ
23.				խաչքար	9-10-րդ դդ.	հս մասում	Հ	Արծվաքար թաղամասում, Լևիկ Բարսեղյանի տնամերձում գտնվող սրբատեղիի պատին
24.				խաչքար	9-10-րդ դդ.	հս մասում	Հ	Արծվաքար թաղամասում, ագուցված Մերուժան Բդոյանի տնամերձում գտնվող սրբատեղիի պատին
25.				խաչքար	9-10-րդ դդ.	հս մասում	Հ	Արծվաքար թաղամասում, ագուցված Մերուժան Բդոյանի տնամերձում գտնվող սրբատեղիի պատին
26.				խաչքար	9-10-րդ դդ.	հս մասում	Հ	Արծվաքար թաղամասում, ագուցված Մերուժան Բդոյանի տնամերձում գտնվող սրբատեղիի պատին
27.				խաչքար	9-10-րդ դդ.	հս մասում	Հ	Արծվաքար թաղամասում, ագուցված Մերուժան Բդոյանի տնամերձում գտնվող սրբատեղիի պատին
28.				խաչքար	9-10-րդ դդ.	հս մասում	Հ	Արծվաքար թաղամասում, ագուցված Մերուժան Բդոյանի տնամերձում գտնվող սրբատեղիի պատին
29.				խաչքար	10-11-րդ դդ.	հս մասում	Հ	Արծվաքար թաղամասում, Լևիկ Բարսեղյանի տնամերձում գտնվող սրբատեղիի պատին
30.				խաչքար	14-15-րդ դդ.	հս մասում	Հ	Արծվաքար թաղամասում, ագուցված Մերուժան Բդոյանի տնամերձում գտնվող սրբատեղիի պատին
31.				խաչքար՝ ՄԱՐԱՆԻ	1540թ.	քաղաքի մեջ (այսուհետև՝ ք. մ.)	Հ	Խաչատուր Տանանյանի տան բակում գտնվող սրբատեղիում երկատված, բեկորները՝ դրված իրար վրա
32.				խաչքար՝ ՏԻԼԻՃԱՆԻ	1544 թ.	ք. մ.	Հ	Արծվաքար թաղամասում, Գավառ - Արծվաքար ճանապարհի աջ կողմում
33.				խաչքար	16-17-րդ դդ.	Արծվաքար թաղամաս	Հ	Գավառ - Արծվաքար ճանապարհի աջ կողմում, ս. Հովհաննես մատուռի մոտ
34.				խաչքար	16-17-րդ դդ.	ք. մ.	Հ	Խաչատուր Տանանյանի տան բակում գտնվող սրբատեղիում ստորին մասը և վերին ձախ անկյունը՝ կոտրված
35.				ԿԱՄՈՒՐՋ. ԳՈՐՈՅԵՆՑ ԿԱՄՈՒՐՋԸ	1867 թ.	ք. մ.	S	Գավառագետի վրա պատվիրատու՝ Գեորգ Գորոյանց
36.				ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՉՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1968 թ.	կնտ	S	ս. Աստվածածին եկեղեցուց ամ, ճարտ.՝ Ռ. Իսրայելյան

37.				ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1981 թ.	հս մասում	S	Արծվաքար թաղամաս քանդ.՝ Բենիկ և Բաբկեն Պետրոսյաններ
38.				ՄԱՏՈՒՌ Ս. ԳԵՎՈՐԳ	15-րդ դ.	հս-աե մասում	S	Հացառատ թաղամասում, գերեզմանոց տանող ճանապարհին
	38.1.			խաչքար	15-րդ դ.		Հ	մուտքից աջ կանգնած 5 խաչքարերից աջից 5-րդը
	38.2.			խաչքար	15-16-րդ դդ.		Հ	մատուռի ներսում, գլխիվայր
	38.3.			խաչքար	15-16-րդ դդ.		Հ	մուտքից աջ կանգնած 5 խաչքարերից աջից 3-րդը
	38.4.			խաչքար՝ Սիրունի	16-րդ դ.		Հ	մատուռի ներսում
	38.5.			խաչքար՝ տեր Պողոսի	16-17-րդ դդ.		Հ	մատուռի ներսում
	38.6.			խաչքար՝ Մինասի	16-17-րդ դդ.		Հ	մատուռի ներսում
39.				ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	17-18-րդ դդ.	հս մասում	S	Արծվաքար թաղամաս, «Ջաղացի դար» բլրի ստորոտին
	39.1			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	ամ պատի շարվածքում, մուտքից աջ
	39.2.			խաչքար	15-16-րդ դդ.		Հ	աե պատի շարվածքում, արտաքուստ
40.				ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ	9-18-րդ դդ., վրկնգ 19-րդ դ.	ամ մասում	S	Հացառատ թաղամասի կնտ-ում
	40.1.			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	ագուցված աե պատին
	40.2.			խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ագուցված աե պատին
	40.3.			խաչքար՝ Մաթոսի և Հուսինի	1531 թ.		Հ	ագուցված աե պատին
	40.4.			խաչքար՝ Թուրվանդի	16-րդ դ.		Հ	ագուցված աե պատին
	40.5.			խաչքար՝ Թաթեոս իրիցի և Ուստիանի	16-րդ դ.		Հ	ագուցված աե պատին
	40.6.			խաչքար՝ Նազանի	16-17-րդ դդ.		Հ	ագուցված աե պատին
	40.7.			գերեզմանոց	9-18-րդ դդ.		S	ավերված
41.				ՄԱՏՈՒՌ Ս. ԽԱՉ	13-17-րդ դդ.,	8 կմ հս-ամ	S	ս. Խաչ սարի գագաթին, վրկնգ՝ 1969թ.՝ տեղաբնակ Ժ. Աչիկյանի կողմից
42.				ՄԱՏՈՒՌ Ս. ՀԱԿՈԲ («ԱՎԱԶԱՆ»)	19-րդ դ.	ամ մասում	S	Հացառատ թաղամասում, Հացառատի ամրոցի աե ստորոտին, ջրմուղի տարածքում
	42.1.			խաչքար	1342 թ.		Հ	երկատված, ագուցված խորանի աջ և ձախ կողմերում, կազմող՝ Սարգիս
	42.2.			խաչքար	15-16-րդ դդ.		Հ	մատուռի ներսում, մեկ շարքով կանգնեցված 5 խաչքարերից աջից 2-րդն է
	42.3.			խաչքար	15-16-րդ դդ.		Հ	ամ պատի տակ, ներքուստ, ստորին ձախ անկյունը կոտրված
	42.4.			խաչքար՝ Չիչագի	1534 թ.		Հ	մատուռի ներսում, մեկ շարքով կանգնեցված 5 խաչքարերից աջից 4-րդն է
	42.5.			խաչքար	16-րդ դ.		Հ	մատուռի ներսում, մեկ շարքով կանգնեցված 5 խաչքարերից ձախից 1-ինը
	42.6.			խաչքար՝ Մարգարի և Պահալունի	16-րդ դ.		Հ	բեմին
	42.7.			խաչքար Պահալունի	16-17-րդ դդ.		Հ	մատուռի ներսում, մեկ շարքով կանգնեցված 5 խաչքարերից աջից 3-րդը, կազմող՝ Տրդատ
	42.8.			խաչքար	16-17-րդ դդ.		Հ	մատուռի ներսում, մեկ շարքով կանգնեցված 5 խաչքարերից աջից 1-ինը

5. Նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների վրա

Սույն հաշվետվությամբ գնահատվել են նախատեսվող անտառապատման աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները՝ հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, ծավալները, իրականացման տեխնոլոգիաները, տեղադիրքը և տարածքի բնական ու սոցիալական առանձնահատկությունները:

Ազդեցությունների գնահատումն իրականացվել է գործունեության բոլոր փուլերի՝ նախապատրաստական, իրականացման և հետնախագծային (տնկարկների խնամքի) աշխատանքների համար: Գնահատվել են մթնոլորտային օդի, ջրային և հողային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, ինչպես նաև բնակչության առողջության և սոցիալ-տնտեսական պայմանների վրա հնարավոր ազդեցությունները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը չի ներառում լայնածավալ շինարարական աշխատանքներ, պայթեցումներ, վտանգավոր քիմիական նյութերի կիրառում կամ այլ բարձր ռիսկային գործընթացներ, հնարավոր ազդեցությունների գերակշիռ մասը կրելու է ժամանակավոր, տեղային և կառավարելի բնույթ: Նախատեսվող բնապահպանական և կազմակերպչական միջոցառումների լիարժեք իրականացման դեպքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա նշանակալի բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում:

5.1. Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա:

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, աշխատանքների ծավալները և կիրառվող տեխնոլոգիաները՝ մթնոլորտային օդի վրա ազդեցությունը գնահատվում է որպես **աննշան, տեղային և ժամանակավոր**:

Անտառապատման աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատակիցների և տեխնիկայի տեղաշարժով, սածիլների տեղափոխմամբ, փոսերի փորման և տնկման աշխատանքների կատարմամբ, ինչպես նաև տրանսպորտային միջոցների ներքին այրման շարժիչներից առաջացող արտանետումներով: Հնարավոր է նաև փոշու սահմանափակ առաջացում չոր եղանակային պայմաններում և չասֆալտապատ ճանապարհներով երթևեկության ժամանակ:

Հաշվի առնելով, որ աշխատանքներն իրականացվելու են սահմանափակ տարածքում, կարճատև ժամանակահատվածում, առանց լայնածավալ հողային աշխատանքների, շինարարական գործընթացների, պայթեցումների կամ արտադրական գործունեության, մթնոլորտային օդի որակի վրա էական բացասական ազդեցություն չի կանխատեսվում:

Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումները կիրականացվեն Հայաստանի Հանրապետության գործող բնապահպանական օրենսդրության և մթնոլորտային օդի պահպանության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի

պահանջներին համապատասխան: Անտառապատման աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն սածիլների և նյութերի տեղափոխման համար օգտագործվող ավտոտրանսպորտի, ինչպես նաև աշխատանքների սպասարկման նպատակով ներգրավված տեխնիկական միջոցների շահագործմամբ: Ներքին այրման շարժիչների աշխատանքի ընթացքում մթնոլորտ կարող են արտանետվել ածխածնի օքսիդ (CO), ազոտի օքսիդներ (NO_x), ծծմբի երկօքսիդ (SO_2), չայրված ածխաջրածիններ (CxHy) և պինդ մասնիկներ (PM_{10} և $PM_{2.5}$):

Ծառատնկման համար նախատեսված փոսերի փորման աշխատանքները կիրականացվեն հատուկ խրամատ փորող սարքի օգնությամբ: Այդ պատճառով հողային աշխատանքների ընթացքում փոշու առաջացումը կլինի սահմանափակ և կրի բացառապես տեղային ու կարճաժամկետ բնույթ: Փոշու առաջացում հնարավոր է նաև ավտոտրանսպորտի տեղաշարժի ընթացքում՝ հիմնականում չասֆալտապատ ճանապարհներով երթևեկելիս և չոր եղանակային պայմաններում:

Միաժամանակ, անտառապատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել աշնանային և գարնանային ժամանակահատվածներում, երբ հողը, որպես կանոն, գտնվում է բնական խոնավ վիճակում: Նշված պայմաններում հողի մակերեսից փոշու առաջացման և մթնոլորտային օդում դրա տարածման հավանականությունը նվազագույն է:

Հաշվի առնելով, որ նախատեսվող աշխատանքներն իրականացվելու են սահմանափակ տարածքում, կրելու են սեզոնային և կարճատև բնույթ, չեն ներառելու լայնածավալ հողային կամ շինարարական աշխատանքներ, իսկ ծառատնկման փոսերը փորվելու են ձեռքով, մթնոլորտային օդի վրա ազդեցությունը գնահատվում է որպես **աննշան, տեղային, ժամանակավոր և լիովին կառավարելի**:

Աշխատանքներում կօգտագործվեն տեխնիկապես սարքին և պարբերական տեխնիկական զննություն անցած ավտոտրանսպորտային միջոցներ, ինչը կնպաստի արտանետումների նվազեցմանը և մթնոլորտային օդի որակի պահպանմանը:

5.2. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա

Նախատեսվող անտառապատման աշխատանքների ընթացքում հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները գնահատվում են որպես **աննշան, տեղային, ժամանակավոր և կառավարելի**:

Անտառապատման աշխատանքները ներառում են տարածքի նախապատրաստումը, տնկանյութի տեղափոխումը, տնկման համար փոսերի կամ խրամատների պատրաստումը և տնկման իրականացումը: Փոսերի և խրամատների պատրաստման եղանակը կընտրվի՝ հաշվի առնելով տեղանքի փաստացի պայմանները, մասնավորապես՝ լանջերի թեքությունը, գրունտի քարքարոտության աստիճանը և տեխնիկական հասանելիությունը: Համեմատաբար քիչ քարքարոտ և տեխնիկայի համար մատչելի տեղամասերում աշխատանքները, անհրաժեշտության դեպքում, կարող են իրականացվել թեթև մեքենայացված տեխնիկական միջոցների կիրառմամբ, իսկ բարձր քարքարոտությամբ, դժվարամատչելի կամ 15°-ից ավելի

թեքություն ունեցող հատվածներում՝ ձեռքով: Արդյունքում հողային ծածկույթի խախտումը կլինի սահմանափակ և կկրի բացառապես տեղային բնույթ:

Աշխատանքների ընթացքում չի նախատեսվում հողի բերրի շերտի լայնածավալ հեռացում, ռելիեֆի էական փոփոխություն, լանջերի հատում կամ այլ գործողություններ, որոնք կարող են հանգեցնել հողերի դեգրադացիայի, էրոզիոն գործընթացների ակտիվացման կամ հողային ծածկույթի կառուցվածքի էական փոփոխության:

Հնարավոր բացասական ազդեցությունները կարող են պայմանավորված լինել միայն ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժով և աշխատանքների կազմակերպմամբ, ինչը առանձին հատվածներում կարող է առաջացնել հողի մակերեսի ժամանակավոր սեղմում: Սակայն, հաշվի առնելով ներգրավվող տեխնիկայի սահմանափակ քանակը, աշխատանքների կարճատև և սեզոնային բնույթը, ինչպես նաև դրանց իրականացումը հիմնականում առկա ճանապարհային ցանցի օգտագործմամբ, նշված ազդեցությունը գնահատվում է որպես աննշան:

Միաժամանակ, նախատեսվող գործունեությունն ունի հողային ռեսուրսների վրա արտահայտված երկարաժամկետ դրական ազդեցություն: Անտառային տնկարկների ձևավորումը կնպաստի հողերի էրոզիայի նվազեցմանը, մակերևութային հոսքի կարգավորմանը, հողի խոնավության պահպանմանը, օրգանական նյութերի կուտակմանը, հողի կառուցվածքի բարելավմանը և բնական հողառաջացման գործընթացների ակտիվացմանը: Արմատային համակարգի զարգացման արդյունքում կբարձրանա հողի կայունությունը, կնվազի քամու և ջրի ազդեցությամբ հողի մասնիկների տեղափոխման հավանականությունը, ինչպես նաև կբարելավվեն հողի պաշտպանական և էկոլոգիական գործառույթները:

Այսպիսով, նախատեսվող անտառապատման աշխատանքների արդյունքում հողային ռեսուրսների վրա հնարավոր կարճաժամկետ բացասական ազդեցությունները կլինեն աննշան և ժամանակավոր, մինչդեռ ծրագրի իրականացման երկարաժամկետ արդյունքը կունենա դրական բնապահպանական նշանակություն:

Աշխատանքների ավարտից հետո տարածքում չեն մնա խախտված հողամասեր կամ ժամանակավոր օգտագործման հրապարակներ, ուստի լրացուցիչ ռեկուլտիվացիոն միջոցառումների անհրաժեշտություն չի առաջանա:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև անտառապատման տարածքների ցանկապատում՝ տնկարկների պահպանությունն ապահովելու նպատակով: Ցանկապատի տեղադրման ընթացքում կիրականացվեն սահմանափակ ծավալի տեղային հողային աշխատանքներ՝ հենասյուների տեղադրման և առանձին հատվածներում դրանց կայունությունն ապահովելու համար: Անհրաժեշտության դեպքում կկատարվի միայն տեղային մակերեսի փոքր անհարթությունների շտկում՝ օգտագործելով նույն տեղամասից ստացված հողը՝ առանց հողի դուրսբերման, տեղափոխման կամ ռելիեֆի էական փոփոխության:

Նշված աշխատանքները կունենան բացառապես տեղային և ժամանակավոր բնույթ, չեն հանգեցնի հողային ծածկույթի լայնածավալ խախտման կամ բերրի հողի շերտի զգալի կորստի, իսկ աշխատանքների ավարտից հետո խախտված հատվածները

կվերականգնվեն՝ հողը վերադարձնելով բնական մակերեսին հնարավորինս մոտ վիճակի։

5.3. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, աշխատանքների իրականացման տեխնոլոգիաները և ծավալները՝ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունը գնահատվում է որպես աննշան, տեղային և ժամանակավոր:
Հաշվի առնելով տեղամասի՝ «Սևան» ազգային պարկից, Սևանա լճից և Գավառագետ գետից ունեցած հեռավորությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ անտառապատման աշխատանքներն իրականացվելու են առանց բնական ջրահոսքերի հուների փոփոխման և ջրային ռեսուրսների վրա անմիջական ներգործության, նախատեսվող գործունեությունը պահպանվող տարածքի և ջրային էկոհամակարգերի վրա ուղղակի բացասական ազդեցություն չի առաջացնի: Աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է բացառել թափոնների, հողի կամ այլ նյութերի տեղափոխումը մոտակա ջրահոսքեր և պահպանել նախատեսված բնապահպանական միջոցառումները:

Նախատեսվող գործունեության շրջանակներում չեն իրականացվելու գետերի, առուների կամ այլ մակերևութային ջրային օբյեկտների հուների փոփոխման, ջրահեռացման կամ այլ հիդրոտեխնիկական աշխատանքներ:

Հաշվի առնելով անտառոտնկման աշխատանքների տեխնոլոգիական լուծումները՝ ջրային ռեսուրսների օգտագործում չի նախատեսվում: Նախատեսվող տնկումներն իրականացվելու են գարնանային և աշնանային բարենպաստ ժամանակահատվածներում, երբ հողի բնական խոնավությունն ապահովում է տնկիների կպչողականությունն ու սկզբնական աճի համար անհրաժեշտ պայմանները: Բացի այդ, տնկման համար նախատեսված են հիմնականում փակ արմատային համակարգով տնկիներ, որոնք բնութագրվում են բարձր կպչողականությամբ և գոյատևման ցուցանիշներով: Ծրագրով հետագա խնամքի ընթացքում ոռոգման աշխատանքներ չեն նախատեսվում, քանի որ տեղանքի բնական խոնավության պայմանները բավարար են տնկիների բնականոն զարգացման համար:Ծրագրով չեն նախատեսվում նաև ստորերկրյա ջրերի շահագործման, հորատման կամ ջրատար հորերի կառուցման աշխատանքներ:

Անտառապատման աշխատանքները կիրականացվեն հիմնականում ձեռքով, իսկ ավտոտրանսպորտային միջոցները կօգտագործվեն միայն աշխատակիցների, տնկիների և անհրաժեշտ նյութերի տեղափոխման նպատակով: Արտադրական կեղտաջրեր չեն առաջանալու, իսկ աշխատանքների ընթացքում վտանգավոր նյութերի կամ քիմիական նյութերի օգտագործում չի նախատեսվում:

Ծրագրի իրականացման ընթացքում բացառվելու է վառելիքի, քսայուղերի և այլ նավթամթերքների լիցքավորումը կամ պահեստավորումը աշխատանքների տարածքում: Տեխնիկական միջոցների սպասարկումը և լիցքավորումը կիրականացվեն այդ նպատակով նախատեսված համապատասխան վայրերում, ինչը կնվազեցնի ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտման ռիսկը:

Միաժամանակ, անտառապատման ծրագրի իրականացումը երկարաժամկետ հեռանկարում կունենա դրական ազդեցություն տարածքի ջրային ռեժիմի վրա: Ծառերի արմատային համակարգի ձևավորումը կնպաստի մթնոլորտային

տեղումների ներթափանցման ավելացմանը, մակերևութային հոսքի կարգավորմանը, հողի խոնավության պահպանմանը, ինչպես նաև ջրային էրոզիայի և հողի լվացման գործընթացների նվազեցմանը։

Ծրագրով տնկման աշխատանքները նախատեսվում է իրականացնել փակ արմատային համակարգով աճեցված սածիլների օգտագործմամբ։ Տնկումն իրականացվելու է աշնանային և գարնանային ժամանակահատվածներում, երբ հողի բնական խոնավությունը բավարար է սածիլների կպչողականությունն ու հետագա աճն ապահովելու համար։ Այդ պատճառով ծրագրով լրացուցիչ ոռոգման աշխատանքներ կամ ջրային ռեսուրսների օգտագործում չի նախատեսվում։

Անտառտնկման աշխատանքներում ներգրավված աշխատակիցների խմելու ջրի պահանջարկը կապահովվի փակ տարաներով մատակարարվող խմելու ջրով։ Կենցաղային-սանիտարական կարիքների համար նախատեսվում է օգտագործել ջրային բաք, որի լիցքավորումը կիրականացվի Գավառ համայնքում գործունեություն իրականացնող, ջրօգտագործման համապատասխան թույլտվություն ունեցող կազմակերպության կողմից՝ կնքված պայմանագրի հիման վրա։

Այսպիսով, նախատեսվող գործունեության շրջանակներում մակերևութային կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրառ չի իրականացվելու և նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա նշանակալի բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում։

5.4. Ազդեցությունը բուսական աշխարհի վրա

Նախատեսվող գործունեության բնույթով պայմանավորված բուսական աշխարհի վրա ազդեցությունը հիմնականում դրական բնույթ կունենա: Անտառապատման աշխատանքների իրականացման ընթացքում բնական բուսածածկույթի լայնածավալ հեռացում կամ ոչնչացում չի նախատեսվում, իսկ աշխատանքները կկատարվեն սահմանափակ միջամտությամբ՝ ձեռքով ծառատնկման ժամանակ:

Ծառատնկման աշխատանքների ընթացքում հնարավոր է միայն առանձին տեղամասերում խոտածածկի աննշան և ժամանակավոր խախտում, որը պայմանավորված կլինի աշխատակիցների տեղաշարժով և տնկման փոսերի փորմամբ: Հաշվի առնելով աշխատանքների սահմանափակ ծավալը՝ նշված ազդեցությունը գնահատվում է որպես աննշան և ժամանակավոր:

Նախագծով նախատեսված է տեղանքի հողակլիմայական պայմաններին համապատասխան բնափայտային տեսակների տնկում, ինչը երկարաժամկետ հեռանկարում կնպաստի տարածքի անտառածածկույթի ավելացմանը, կենսաբազմազանության պահպանմանը, տարբեր բուսատեսակների վերականգնմանը, հողերի էրոզիայի նվազեցմանը և էկոհամակարգի բարելավմանը:

Այսպիսով, նախատեսվող գործունեության արդյունքում բուսական աշխարհի վրա հնարավոր կարճաժամկետ բացասական ազդեցությունները կլինեն աննշան և ժամանակավոր, մինչդեռ ծրագրի երկարաժամկետ ազդեցությունը գնահատվում է որպես դրական:

Ինչպես նշվել է հաշվետվության «Բուսական աշխարհ» բաժնում, տնկման համար ընտրվել են տվյալ տարածքի հողակլիմայական պայմաններին հարմարեցված ծառատեսակներ, ինչը կնպաստի տնկարկների բարձր կպչողականությանը, բնական էկոհամակարգերի հետ ներդաշնակ զարգացմանը և օտարածին\ինվազիվ տեսակների տարածման ռիսկի բացառմանը:

5.5. Ազդեցությունը կենդանական աշխարհի վրա

Նախատեսվող անտառապատման աշխատանքների իրականացման ընթացքում կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները գնահատվում են որպես աննշան, տեղային և ժամանակավոր:

Աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատակիցների ներկայությամբ, սահմանափակ թվով ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժով և ծառատնկման աշխատանքների իրականացմամբ, որոնք կարող են առաջացնել կենդանական աշխարհի առանձին ներկայացուցիչների ժամանակավոր անհանգստություն և նրանց կարճաժամկետ տեղաշարժ դեպի հարակից տարածքներ:

Հաշվի առնելով, որ ծառատնկման փոսերը փորվելու են ձեռքով, աշխատանքների ընթացքում չեն օգտագործվելու ծանր շինարարական տեխնիկա, չեն իրականացվելու պայթեցման, հորատման կամ բարձր աղմուկ և թրթռումներ առաջացնող աշխատանքներ, իսկ ավտոտրանսպորտը կօգտագործվի միայն աշխատակիցների, սածիլների և անհրաժեշտ նյութերի տեղափոխման նպատակով, կենդանական

աշխարհի կենսամիջավայրերի վրա ազդեցությունը կլինի սահմանափակ և չի հանգեցնի դրանց էական խախտման կամ մասնատման։

Ծրագրի իրականացման ընթացքում չի նախատեսվում կենդանիների ապրելավայրերի, բնադրավայրերի կամ բազմացման տարածքների դիտավորյալ ճնաում, ինչպես նաև բնական կենսամիջավայրերի լայնածավալ փոփոխություն։

Միաժամանակ, ծրագրի իրականացումը կունենա արտահայտված երկարաժամկետ դրական ազդեցություն կենդանական աշխարհի վրա։ Անտառապատման արդյունքում կձևավորվեն նոր անտառային կենսամիջավայրեր, որոնք կապահովեն վայրի կենդանիների համար ապաստարանային, սննդային և բազմացման առավել բարենպաստ պայմաններ, կնպաստեն տեսակների տարածման հնարավորությունների ընդլայնմանը, կենսաբազմազանության պահպանմանը և տարածքի էկոլոգիական կայունության բարձրացմանը։

Այսպիսով, նախատեսվող գործունեության արդյունքում կենդանական աշխարհի վրա հնարավոր բացասական ազդեցությունները գնահատվում են որպես աննշան, տեղային և ժամանակավոր, իսկ ծրագրի երկարաժամկետ ազդեցությունը կլինի դրական՝ պայմանավորված նոր կենսամիջավայրերի ձևավորմամբ և էկոհամակարգի վերականգնման գործընթացների խթանմամբ։

5.6. Ֆիզիկական ազդեցություններ (աղմուկ և թրթռումներ)

Նախատեսվող անտառապատման աշխատանքների իրականացման ընթացքում աղմուկի և թրթռումների առաջացումը գնահատվում է որպես աննշան, տեղային և ժամանակավոր։

Աղմուկի հիմնական աղբյուրները կլինեն աշխատակիցների և անհրաժեշտ նյութերի տեղափոխման նպատակով օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցները, ինչպես նաև ցանկապատման աշխատանքների ընթացքում կիրառվող ձեռքի գործիքները։ Ծառատնկման փոսերի փորման աշխատանքները կիրականացվեն ձեռքով՝ առանց էքսկավատորների, բուլդոզերների կամ այլ ծանր շինարարական տեխնիկայի կիրառման։

Ծրագրով չեն նախատեսվում հորատման, պայթեցման, ջարդման կամ բարձր մակարդակի աղմուկ և թրթռումներ առաջացնող այլ աշխատանքներ։ Ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժը կլինի սահմանափակ և կիրականացվի բացառապես աշխատակիցների, սածիլների և անհրաժեշտ նյութերի տեղափոխման նպատակով։

Աշխատանքները կիրականացվեն միայն ցերեկային ժամերին, ինչը լրացուցիչ կնվազեցնի հնարավոր անհանգստությունը շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ։

Հաշվի առնելով, որ ծրագրի տարածքը գտնվում է բնակելի գոտուց զգալի հեռավորության վրա, իսկ աշխատանքներն ունեն տեղային և կարճատև բնույթ, առաջացող աղմուկն ու թրթռումները բնակավայրերում չեն զգացվի։ Տարածության մեծացման հետ աղմուկի ինտենսիվությունը բնականորեն նվազում է, ուստի ծրագրի

իրականացման ընթացքում առաջացող աղմուկը և թրթռումները չեն ունենա էական ազդեցություն բնակչության կենսապայմանների վրա։

Այսպիսով, նախատեսվող գործունեության բնույթը, կիրառվող տեխնոլոգիաները և աշխատանքների կազմակերպման եղանակը հաշվի առնելով՝ աղմուկի և թրթռումների ազդեցությունը գնահատվում է որպես աննշան, տեղային, ժամանակավոր և լիովին կառավարելի։

5.7 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները գնահատվում են որպես սահմանափակ, կարճաժամկետ և կառավարելի։ Հաշվի առնելով, որ աշխատանքները նախատեսվում է իրականացնել բնակավայրերից զգալի հեռավորության վրա, ծրագրի ազդեցությունը տեղական բնակչության առողջության վրա չի ակնկալվում։

Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կարող են պայմանավորված լինել անտառապատման և ցանկապատման աշխատանքների կատարման ընթացքում առաջացող արտադրական գործոններով, մասնավորապես՝ փոշու ժամանակավոր առաջացմամբ, ձեռքի գործիքների օգտագործմամբ, ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժով, արևային ճառագայթման ազդեցությամբ, բարձր և ցածր ջերմաստիճանների պայմաններում բաց տարածքում աշխատանքների իրականացմամբ, ինչպես նաև ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ։

Աշխատանքների ընթացքում հնարավոր ռիսկերը կարող են ներառել աշխատողների վնասվածքները ձեռքի գործիքների օգտագործման ժամանակ, սայթաքման կամ ընկնելու դեպքերը, միջատների և օձերի խայթոցների հավանականությունը, ինչպես նաև հրդեհավտանգ իրավիճակների առաջացումը տարվա չոր եղանակին։ Նշված ռիսկերը բնորոշ են նմանատիպ բացօթյա աշխատանքներին և համարվում են կառավարելի՝ աշխատանքի անվտանգության պահանջների պահպանման պայմաններում։

Ռիսկերի նվազեցման նպատակով բոլոր աշխատակիցները կապահովվեն անհատական պաշտպանության միջոցներով (աշխատանքային հագուստ, պաշտպանիչ ձեռնոցներ, ամուր կոշիկներ, անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանիչ ակնոցներ), աշխատանքների մեկնարկից առաջ կանցնեն աշխատանքի անվտանգության և հրդեհային անվտանգության հրահանգավորում, իսկ աշխատանքների իրականացման վայրում մշտապես հասանելի կլինեն առաջին բուժօգնության դեղարկղ և հրդեհաշիջման առաջնային միջոցներ։

Աշխատանքները կիրականացվեն բացառապես ցերեկային ժամերին՝ պահպանելով աշխատանքի պաշտպանության, սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության գործող նորմերի և կանոնների պահանջները։

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, աշխատանքների կարճատև և սեզոնային բնույթը, ինչպես նաև նախատեսված կանխարգելիչ միջոցառումները՝ մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները գնահատվում են որպես աննշան, տեղային, ժամանակավոր և լիովին կառավարելի։

5.8 Սոցիալ-տնտեսական ազդեցություն

Նախատեսվող գործունեության իրականացումը կունենա հիմնականում **դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն** ինչպես տեղական համայնքի, այնպես էլ շրջակա միջավայրի տեսանկյունից:

Նախատեսվող անտառապատման և հետագա խնամքի աշխատանքները կրում են **սեզոնային բնույթ** և իրականացվելու են հիմնականում աշնանային և գարնանային տնկման, ինչպես նաև բուսավեգետացիոն շրջանի ընթացքում իրականացվող խնամքի աշխատանքների ժամանակ:

Աշխատանքների ակտիվ փուլերում նախատեսվում է ներգրավել **մոտավորապես 30-35 աշխատակից**, որոնց թիվը կարող է փոփոխվել՝ կախված իրականացվող աշխատանքների ծավալից և փուլից: Ներգրավվող աշխատակիցների գերակշիռ մասը նախատեսվում է հավաքագրել **Գավառ համայնքից**, հիմնականում Գավառ **բնակավայրից**, ինչը կնպաստի բնակչության ժամանակավոր զբաղվածության աճին, լրացուցիչ եկամուտների ձևավորմանը և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Աշխատանքների կազմակերպմանը և վերահսկմանը կմասնակցեն նաև նախաձեռնող կազմակերպության՝ **«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի** մասնագետները:

Անտառտնկման աշխատանքների իրականացման ընթացքում ներգրավված աշխատակիցների հանգստի, սննդի ընդունման և կենցաղային պայմանների ապահովման նպատակով նախատեսվում է օգտագործել շարժական վագոն-տնակ: Վագոն-տնակը կծառայի որպես ժամանակավոր կենցաղային տարածք՝ աշխատանքային գործընթացի ընթացքում աշխատակիցների համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով: Տարածքը կապահովվի սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան պայմաններով, իսկ խմելու ջուրը կբերվի փակ տարաներով: Անհրաժեշտության դեպքում կենցաղային նպատակներով ջրամատակարարումը կիրականացվի բաքի միջոցով՝ համապատասխան թույլտվություն ունեցող ջրօգտագործողի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Ծրագրի իրականացումը կնպաստի համայնքային տարածքների բնապահպանական վիճակի բարելավմանը, հողերի էրոզիոն գործընթացների նվազեցմանը, կանաչ տարածքների ընդլայնմանը, կենսաբազմազանության պահպանությանը և բնակչության համար առավել բարենպաստ բնական միջավայրի ձևավորմանը: Երկարաժամկետ հեռանկարում անտառապատված տարածքները կնպաստեն ածխաթթու գազի կլանմանը, միկրոկլիմայի բարելավմանը, փոշու տարածման նվազեցմանը և լանդշաֆտի գեղագիտական արժեքի բարձրացմանը՝ ստեղծելով նաև լրացուցիչ բնապահպանական և սոցիալական օգուտներ:

Նախատեսվող գործունեության իրականացումը չի նախատեսում բնակչության վերաբնակեցում, հողօգտագործողների կամ սեփականատերերի իրավունքների սահմանափակում, համայնքային ենթակառուցվածքների խաթարում կամ բնակչության կենսապայմանների վատթարացում: Աշխատանքների ընթացքում

կապահովվի աշխատանքի, սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության գործող նորմերի և կանոնների պահպանումը։

Ընդհանուր առմամբ, նախատեսվող գործունեությունը համապատասխանում է համայնքի կայուն զարգացման և շրջակա միջավայրի պահպանության սկզբունքներին, իսկ դրա իրականացումից ակնկալվում են հիմնականում երկարաժամկետ դրական բնապահպանական և սոցիալ-տնտեսական արդյունքներ։

5.9 Թափոնների կառավարում

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կձևավորվեն հիմնականում ոչ վտանգավոր կենցաղային և արտադրական թափոններ։

Աշխատանքների ընթացքում աշխատակազմի կողմից կարող են առաջանալ կենցաղային թափոններ՝ թղթի, ստվարաթղթի, պոլիմերային փաթեթավորման, տնկիների տեղափոխման և պահպանման ընթացքում օգտագործված պլաստիկ կամ պոլիէթիլենային փաթեթավորման նյութերի, սննդամթերքի տարաների և այլ կենցաղային աղբի տեսքով՝ օրական մինչև 5 կգ։

Առաջացող կենցաղային թափոնները դասակարգվում են որպես «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)», թափոնի ծածկագիր՝ 91200400 01 00 4, վտանգավորության դաս՝ 4։

Կենցաղային թափոնները կհավաքվեն համապատասխան տարողություններում և պարբերաբար կհեռացվեն համայնքում գործող աղբահանության ծառայության միջոցով՝ պահպանելով թափոնների կառավարման վերաբերյալ գործող իրավական ակտերի պահանջները։

Տարածքների ցանկապատման աշխատանքների ընթացքում կարող են առաջանալ նաև փշալարի կտրված և օգտագործման համար ոչ պիտանի մետաղական մասնիկներ՝ ընդհանուր մինչև 5 կգ։ Դրանք դասակարգվում են որպես «Կտորների տեսքով ցինկապատ պողպատի թափոններ», թափոնի ծածկագիր՝ 3512041201995, վտանգավորության դաս՝ 5։

Մետաղական թափոնները կհավաքվեն առանձնացված տարողություններում, ժամանակավորապես կպահվեն ծրագրի տարածքում՝ անվտանգության պահանջների պահպանմամբ և հետագայում կհանձնվեն համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության՝ վերամշակման նպատակով։

Ծրագրի իրականացման ընթացքում թափոնների պատշաճ հավաքման, առանձնացման, ժամանակավոր պահպանման և հեռացման արդյունքում շրջակա միջավայրի աղտոտման կամ մարդու առողջության վրա էական բացասական ազդեցություններ չեն ակնկալվում։

5.10 Արտակարգ իրավիճակներ և վթարային ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում լայնածավալ տեխնածին կամ բնական արտակարգ իրավիճակների առաջացման հավանականությունը գնահատվում է որպես ցածր: Աշխատանքներն իրականացվելու են բաց տարածքում, առանց վտանգավոր քիմիական նյութերի օգտագործման, պայթեցման աշխատանքների կամ շրջակա միջավայրի համար բարձր ռիսկ ներկայացնող տեխնոլոգիական գործընթացների:

Հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- աշխատանքների ընթացքում աշխատողների վնասվածքներ կամ դժբախտ պատահարներ,
- տեխնիկական միջոցների անսարքություններ,
- շարժական տեխնիկայից վառելիքի կամ քսայուղերի պատահական արտահոսք,
- հրդեհի առաջացում՝ բարձր ջերմաստիճանի, չոր բուսածածկի կամ անզգույշ վերաբերմունքի հետևանքով,
- ուժեղ քամու, կարկուտի կամ այլ անբարենպաստ եղանակային պայմանների հետևանքով աշխատանքների ժամանակավոր դադարեցման անհրաժեշտություն:

Վթարային իրավիճակների կանխարգելման նպատակով նախատեսվում է.

- աշխատանքները կազմակերպել տեխնիկական անվտանգության կանոնների պահպանմամբ,
- օգտագործել միայն տեխնիկապես սարքին մեքենաներ և սարքավորումներ,
- աշխատանքների վայրում ունենալ առաջին բուժօգնության դեղարկղ,
- աշխատակիցներին ապահովել անհատական պաշտպանիչ միջոցներով (արտահագուստ, պաշտպանիչ ձեռնոցներ, անվտանգության կոշիկներ և այլն),
- հրդեհավտանգ ժամանակահատվածում բացառել բաց կրակի օգտագործումը և ծխելը աշխատանքների տարածքում,
- աշխատանքների վայրում ունենալ առաջնային հրդեհաշիջման միջոցներ (կրակմարիչներ, բահեր, ջրի պաշար կամ այլ համապատասխան միջոցներ),
- վառելիքի կամ քսայուղերի պատահական արտահոսքի դեպքում անմիջապես սահմանափակել արտահոսքը, աղտոտված հողաշերտը հավաքել և հանձնել համապատասխան կարգով,
- անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում ժամանակավորապես դադարեցնել աշխատանքները:

Նախատեսված միջոցառումների իրականացմամբ հնարավոր արտակարգ իրավիճակների առաջացման հավանականությունը և դրանց ազդեցությունը շրջակա

միջավայրի, բնակչության առողջության և կենսաբազմազանության վրա գնահատվում են որպես **աննշան և կառավարելի**:

Արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում պատասխանատու անձը պարտավոր է անմիջապես կազմակերպել աշխատանքների դադարեցումը, անհրաժեշտության դեպքում տեղեկացնել իրավասու մարմիններին, իրականացնել մարդկանց անվտանգ տարհանում և ձեռնարկել շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցմանն ուղղված անհետաձգելի միջոցառումներ:

Անտառային հրդեհների առաջացման և տարածման ռիսկերի նվազեցման նպատակով նախատեսվում է անտառապատվող տարածքների սահմանային հատվածներում հակահրդեհային հանքայնացված գոտիների ձևավորում՝ հաշվի առնելով տեղանքի ռելիեֆային առանձնահատկությունները և առկա բուսածածկը: Հանքայնացված գոտիները պարբերաբար կմաքրվեն չոր խոտածածկից, բուսական մնացորդներից և այլ այրվող նյութերից՝ ապահովելով դրանց հակահրդեհային գործառույթի պահպանումը: Միաժամանակ, հրդեհավտանգ ժամանակահատվածներում կիրականացվի տարածքի ուժեղացված հսկողություն, կարգելվի բաց կրակի օգտագործումը, իսկ աշխատանքների իրականացման ընթացքում կապահովվի առաջնային հրդեհաշիջման միջոցների՝ կրակմարիչների, բահերի և անհրաժեշտ այլ պարագաների առկայությունն ու հասանելիությունը: Հրդեհի հայտնաբերման դեպքում աշխատանքներն անհապաղ կդադարեցվեն, կտեղեկացվի համապատասխան արտակարգ իրավիճակների արձագանքման ծառայությունը, և անվտանգ պայմանների առկայության դեպքում կձեռնարկվեն հրդեհի տարածումը սահմանափակելու առաջնային միջոցառումներ:

5.11 Պատմամշակութային հուշարձանների վրա ազդեցությունը

Ուսումնասիրության տարածքի հարակից հատվածներում գտնվում են ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ: Նախատեսվող գործունեության իրականացման տեղամասի մոտ գտնվող հուշարձաններ չեն հայտնաբերվել և նախատեսվող գործունեության շրջանակներում **անտառապատման և ցանկապատման աշխատանքները կիրականացվեն բացառապես «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրված հողամասերի սահմաններում**, համաձայն համապատասխան իրավահաստատող փաստաթղթերի:

Նախագծով նախատեսված ցանկապատը **չի ընդգրկելու և չի հատելու պատմամշակութային որևէ օբյեկտի,** ինչպես նաև չեն իրականացվելու որևէ աշխատանքներ պատմամշակութային հուշարձանների տարածքում կամ դրանց պահպանության գոտիներում: Նախատեսվող աշխատանքները ներառում են բացառապես անտառապատման և ցանկապատման միջոցառումներ և չեն նախատեսում ծանր շինարարական աշխատանքներ, պայթեցումներ կամ պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա ազդեցություն ունեցող այլ գործունեություն:

Աշխատանքների իրականացման ընթացքում, հնագիտական կամ պատմամշակութային արժեք ներկայացնող պատահական գտածոների հայտնաբերման դեպքում, տվյալ հատվածում աշխատանքներն անմիջապես

կդադարեցվեն, և սահմանված կարգով այդ մասին կտեղեկացվի Հայաստանի Հանրապետության լիազոր պետական մարմնին: Հետագա աշխատանքները կվերսկսվեն միայն վերջինիս համաձայնությամբ և համապատասխան ցուցումների կատարմամբ:

Ընդհանուր առմամբ, նախատեսվող գործունեության արդյունքում պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա բացասական ազդեցություն չի ակնկալվում, և ազդեցությունը գնահատվում է որպես աննշան:

6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման միջոցառումներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման և նվազեցման նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

Մթնոլորտային օդ

- Աշխատանքների ընթացքում տեխնիկայի շահագործումն իրականացնել տեխնիկապես սարքին վիճակում:
- Անհրաժեշտության դեպքում փոշու առաջացումը նվազեցնել ճանապարհների և աշխատանքային տարածքների խոնավեցմամբ:
- Խուսափել տեխնիկայի երկարատև պարապ աշխատանքից:

Հողեր

- Աշխատանքներն իրականացնել միայն նախագծով նախատեսված տարածքներում:
- Չթույլատրել հողի աղտոտումը կենցաղային կամ հնարավոր արտադրական թափոններով:
- Վառելիքի կամ քսայուղերի պատահական արտահոսքի դեպքում անմիջապես իրականացնել մաքրման աշխատանքներ:

Ջրային ռեսուրսներ

- Չթույլատրել թափոնների կամ այլ աղտոտող նյութերի հայտնվելը մակերևութային կամ ստորերկրյա ջրերում:
- Կենցաղային կեղտաջրերի արտահոսք աշխատանքների ընթացքում չի նախատեսվում:

Բուսական և կենդանական աշխարհ

- Չվնասել նախատեսված աշխատանքային տարածքից դուրս գտնվող բուսականությունը:
- Աշխատանքները կազմակերպել այնպես, որ հնարավորինս նվազեցվի կենդանական աշխարհի անհանգստացումը:
- Ծառատունկն իրականացնել ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան:

Թափոններ

- Թափոնները հավաքել առանձնացված տարողություններում:
- Կենցաղային թափոնները պարբերաբար հեռացնել համայնքային աղբահանության ծառայության միջոցով:
- Ցինկապատ պողպատի թափոնները հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպության՝ վերամշակման նպատակով:

Աղմուկ

- Աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին։
- Օգտագործել տեխնիկապես սարքին տեխնիկա։
- Խուսափել միաժամանակ մեծ թվով աղմկոտ տեխնիկայի շահագործումից։

Հրդեհային անվտանգություն

- Արգելել բաց կրակի օգտագործումը։
- Ապահովել առաջնային հրդեհաշիջման միջոցների առկայությունը։
- Չոր եղանակին պահպանել հրդեհային անվտանգության բոլոր պահանջները։

6.1 Բնապահպանական կառավարման պլան

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, նվազեցման և վերահսկման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան, որը ներառում է գործունեության բոլոր փուլերում իրականացվելիք բնապահպանական միջոցառումները:

Բնապահպանական կառավարման պլանի նպատակն է ապահովել նախատեսվող գործունեության իրականացումը Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության և գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, կանխել կամ հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները, ապահովել բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, թափոնների պատշաճ կառավարումը, ինչպես նաև աշխատանքի և հրդեհային անվտանգության պահանջների պահպանումը:

Պլանում ներառված միջոցառումները կիրականացվեն նախատեսվող գործունեության բոլոր փուլերում՝ ներառյալ անտառապատման, տնկիների խնամքի և շրջակա միջավայրի մշտադիտարկման ժամանակահատվածներում: Անտառապատված տարածքի խնամքը նախատեսվում է իրականացնել **7 տարվա** ընթացքում, իսկ շրջակա միջավայրի մշտադիտարկումը՝ **25 տարվա** ընթացքում՝ ծրագրի իրականացման արդյունավետության գնահատման և անտառապատված տարածքի վիճակի վերահսկման նպատակով:

Բնապահպանական կառավարման պլան

Բնապահպանական բաղադրիչ	Հնարավոր ազդեցություն	Բնապահպանական միջոցառում	Կատարման ժամկետ	Պատասխանատու
Մթնոլորտային օդ	Փոշու առաջացում, տեխնիկայի արտանետումներ	Օգտագործել տեխնիկապես սարքին մեքենաներ, անհրաժեշտության դեպքում խոնավեցնել աշխատանքային տարածքը, բացառել տեխնիկայի անհարկի պարապ աշխատանքը։	Աշխատանքների ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ
Հողային ծածկ	Հողի աղտոտում, մեխանիկական վնասում	Աշխատանքներն իրականացնել միայն նախագծային սահմաններում։ Բացառել վառելիքի և քսայուղերի արտահոսքը, իսկ արտահոսքի դեպքում անմիջապես մաքրել տարածքը։ Օգտագործել միայն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները։ Տրանսպորտային միջոցների լիցքավորումը և վերանորոգումն իրականացնել գործունեության տարածքից դուրս՝ մասնագիտացված կետերում։	Աշխատանքների ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ
Ջրային ռեսուրսներ	Ջրի օգտագործում, փոշենստեցման անհրաժեշտություն	Աշխատողների համար ապահովել խմելու որակի բերովի ջուր (շշերով)։ Անհրաժեշտության դեպքում ջրցանի և փոշենստեցման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր։ Ջրցանն իրականացնել 0.015 մ³/մ² հաշվարկային նորմայով՝ բացառելով ջրի ավելցուկային օգտագործումը և մակերևութային հոսքերի առաջացումը։	Տնկման և խնամքի ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ
Բուսական աշխարհ	Տնկված տնկիների վնասում, կպչողականության նվազում	Տնկումն իրականացնել ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան, կատարել լրատնկման և խնամքի աշխատանքներ։	Տնկման և խնամքի ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ
Կենդանական աշխարհ	Ժամանակավոր անհանգստություն	Աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին։ Չվնասել աշխատանքային տարածքից դուրս գտնվող բնական միջավայրը։	Աշխատանքների ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ

Բնապահպանական բաղադրիչ	**Հնարավոր ազդեցություն**	**Բնապահպանական միջոցառում**	**Կատարման ժամկետ**	**Պատասխանատու**
Թափոններ	Կենցաղային և մետաղական թափոնների առաջացում	Թափոնները հավաքել առանձնացված տարողություններում, ժամանակին հեռացնել կամ հանձնել համապատասխան կազմակերպություններին:	Աշխատանքների ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ
Արտակարգ իրավիճակներ և հրդեհային անվտանգություն	Հրդեհի առաջացման վտանգ	Ապահովել հրդեհաշիջման անհրաժեշտ միջոցների առկայությունը, բացառել բաց կրակի օգտագործումը և պահպանել հրդեհային անվտանգության կանոնները:	Աշխատանքների ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ
Ցանկապատման աշխատանքներ	Փշալարի և մետաղական մսացորդների առաջացում, աշխատողների վնասվածքների վտանգ	Փշալարի և մետաղական մսացորդները հավաքել և հանձնել համապատասխան կազմակերպությանը, աշխատանքների ընթացքում կիրառել անհատական պաշտպանության միջոցներ:	Աշխատանքների ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ
Պատմամշակութային հուշարձաններ	Աշխատանքների ընթացքում հնագիտական շերտի կամ հուշարձանի հնարավոր հայտնաբերում	Անտառտնկման աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին՝ հետագա գործողությունները ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմակերպելու համար:	Աշխատանքների ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ
Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	Աշխատողների առողջության և անվտանգության վրա հնարավոր ազդեցություն	Պահպանել աշխատանքային անվտանգության և սանիտարահիգիենիկ պահանջները՝ աշխատողներին ապահովելով անհատական պաշտպանության միջոցներով, առաջին բուժօգնության դեղարկղիկով և անհրաժեշտ կենցաղային պայմաններով: Վտանգավոր եղանակային պայմաններում դադարեցնել աշխատանքները, վերահսկել տրանսպորտային միջոցների երթևեկությունը՝ բացառելով դրանց կուտակումները:	Աշխատանքների ընթացքում	«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական ՀՄԴ

6.2 Շրջակա միջավայրի մշտադիտարկման ծրագիր

Շրջակա միջավայրի մշտադիտարկման ծրագիրը մշակվել է նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում և դրանից հետո շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի, իրականացվող բնապահպանական միջոցառումների արդյունավետության, ինչպես նաև հնարավոր բացասական ազդեցությունների ժամանակին հայտնաբերման և գնահատման նպատակով:

Մշտադիտարկման շրջանակներում նախատեսվում է պարբերաբար վերահսկել անտառապատված տարածքի վիճակը, տնկիների աճն ու կպչողականությունը, խնամքի աշխատանքների արդյունավետությունը, թափոնների կառավարման պահանջների կատարումը, ցանկապատի տեխնիկական վիճակը, ինչպես նաև հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացումը:

Մշտադիտարկման արդյունքները հիմք կհանդիսանան անհրաժեշտության դեպքում լրացուցիչ բնապահպանական միջոցառումների մշակման և իրականացման, ինչպես նաև անտառապատված տարածքի երկարաժամկետ պահպանության և կայուն զարգացման ապահովման համար:

Շրջակա միջավայրի մշտադիտարկման ծրագիր:

Մշտադիտարկման օբյեկտ	**Մշտադիտարկման վայր**	**Ցուցանիշներ**	**Մշտադիտարկման մեթոդ**	**Նվազագույն հաճախականություն**
Անտառապատման աշխատանքներ	Անտառապատվող տարածք	Տնկման աշխատանքների համապատասխանությունը նախագծին, տնկիների ճիշտ տեղաբաշխումը	Տեսողական դիտարկում	Աշխատանքների ընթացքում 2026-ի աշուն 2027-ի գարուն
Տնկված տնկիներ	Անտառապատված տարածք	Կպչողականություն, աճ, չորացած տնկիների քանակ, լրատնկման անհրաժեշտություն	Դաշտային դիտարկում և հաշվառում	Գարնանը և աշնանը
ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման եւ դրանց պահպանության նպատակով	Անտառապատված տարածք	Հայտնաբերման դեպքում առանձնացնել վայրը և սահմանել պահպանություն:	Մասնագիտական ուսումնասիրություն	Համաձայն գրականության և տվյալների հնարավոր հանդիպող բույսերի ծաղկման շրջան: 25 տարի շարունակ:
1.Կենսաբազմազանության բույսերի աճելավայրերի, կենդանիների ապրելավայրերի առկայություն,	Անտառապատված տարածք	Հայտնաբերման դեպքում առանձնացնել վայրը և սահմանել պահպանություն:	Մասնագիտական ուսումնասիրություն	Պարբերաբար 25 տարի շարունակ:

փոփոխություններ ի վեր հսկողություն				
Հողային ծածկ	Անտառապատման և ցանկապատման տարածք	Հողի աղտոտման, վառելիքի կամ քսայուղերի արտահոսքի բացակայություն	Տեսողական դիտարկում	Շաբաթական
Թափոնների կառավարում	Աշխատանքային տարածք	Թափոնների առանձնացված հավաքում, պահեստավորում և հեռացում	Տեսողական վերահսկողություն	Շաբաթական 25 տարի շարունակ։
Ցանկապատ	Ցանկապատված տարածք	Սյուների կայունություն, փշալարի ամբողջականություն	Տեսողական դիտարկում	Ամսական
Հրդեհային անվտանգություն	Աշխատանքային տարածք	Հրդեհային անվտանգության պահանջների պահպանում	Տեսողական վերահսկողություն	25 տարի շարունակ։
Անտառապատված տարածքի խնամք	Անտառապատված տարածք	Փխրեցում, մոլախոտերի հեռացում, լրատնկում, տնկիների աճ	Դաշտային դիտարկում	Խնամքի ծրագրին համապատասխան (2027–2032 թթ.) 25 տարի շարունակ մշտադիտարկումներ։

Հաշվի առնելով, որ անտառապատված տարածքի խնամքի աշխատանքները նախատեսվում է իրականացնել **7 տարվա** ընթացքում, իսկ շրջակա միջավայրի մշտադիտարկումը՝ **25 տարվա** ընթացքում, մշտադիտարկման արդյունքները հնարավորություն կտան գնահատելու անտառապատման արդյունավետությունը, տնկիների աճի դինամիկան, անտառային տնկարկի կայունության աստիճանը և անհրաժեշտության դեպքում ժամանակին ձեռնարկելու համապատասխան լրացուցիչ միջոցառումներ:

Մշտադիտարկման ծրագրի պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով նախաձեռնողի կողմից նախատեսվում է հատկացնել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ դաշտային մշտադիտարկումների, արդյունքների փաստաթղթավորման, հաշվառման և հաշվետվությունների կազմման աշխատանքների իրականացման համար:

Հաշվի առնելով մշտադիտարկման ծավալները, ծրագրի իրականացման ժամանակահատվածը և դաշտային աշխատանքների պարբերականությունը՝ շրջակա միջավայրի մշտադիտարկման ծրագրի իրականացման համար նախատեսվում է տարեկան հատկացնել շուրջ 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի մշտադիտարկումը կիրականացվի 25 տարվա ընթացքում՝ համաձայն հաստատված մշտադիտարկման ծրագրի, իսկ անտառապատված տարածքի խնամքի աշխատանքները՝ 7 տարվա ընթացքում՝ համաձայն նախագծով նախատեսված խնամքի միջոցառումների:

Ծախսային ուղղություն	**Գումար**
Կենսաբազմազանության մասնագիտական ուսումնասիրություններ՝ 3 այց	180 000 դրամ
Անտառտնկարկների վիճակի մասնագիտական գնահատում՝ 3 այց	180 000 դրամ
Տրանսպորտային ծախսեր՝ 6 այց	120 000 դրամ
Արդյունքների վերլուծություն և հաշվետվություն	80 000 դրամ
Լրացուցիչ ստուգողական դիտարկումների պահուստ	40 000 դրամ
Ընդամենը	600 000 դրամ

5. Նախատեսվող գործունեության համապատասխանությունը հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին

Նախատեսվող գործունեությունը գնահատվել է նաև Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարության բնապահպանական ուղղությունների տեսանկյունից, որի շրջանակներում իրականացվել է Ռազմավարական էկոլոգիական գնահատում (ՌԷԳ) և տրվել է Պետական բնապահպանական փորձաքննության դրական եզրակացություն։

Ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությամբ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում սահմանվել են մի շարք բնապահպանական առաջնահերթություններ, մասնավորապես՝ բնական ռեսուրսների կայուն օգտագործումը, հողերի պահպանությունը և արդյունավետ օգտագործումը, էրոզիոն և այլ դեգրադացիոն գործընթացների կանխարգելումը, կենսաբազմազանության պահպանումը, շրջակա միջավայրի որակի բարելավումը, կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմումը, ինչպես նաև կանաչապատման և անտառապատման միջոցառումների խթանումը։

«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի կողմից նախատեսվող անտառապատման ծրագիրը համահունչ է նշված բնապահպանական ուղություններին, քանի որ ծրագրով նախատեսվում է համայնքային հողերի անտառապատում, տեղական պայմաններին հարմարեցված ծառատեսակների տնկում, տնկիների խնամք և երկարաժամկետ պահպանություն, ինչը կնպաստի հողերի պաշտպանությանը, էրոզիոն գործընթացների նվազեցմանը, կենսաբազմազանության պահպանությանը, անտառածածկույթի ավելացմանը և տարածքի էկոլոգիական վիճակի բարելավմանը։

Ծրագրի իրականացմամբ նախատեսվող միջոցառումները չեն հակասում Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարության շրջանակներում իրականացված Ռազմավարական էկոլոգիական գնահատմամբ սահմանված բնապահպանական պահանջներին և նպաստում են դրանց գործնական իրականացմանը՝ ապահովելով բնական ռեսուրսների կայուն օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության սկզբունքների պահպանումը։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ նախատեսվող գործունեությունը համապատասխանում է Գեղարքունիքի մարզի զարգացման ռազմավարության շրջանակներում իրականացված Ռազմավարական էկոլոգիական գնահատմամբ սահմանված բնապահպանական ուղություններին և նպաստում է մարզի կայուն զարգացման բնապահպանական նպատակների իրականացմանը։

ՌԷԳ հաշվետվությամբ սահմանված ուղղություն	**Նախատեսվող գործունեության համապատասխանությունը**
Հողերի պահպանություն և կայուն օգտագործում	Անտառապատումը նպաստում է հողերի պահպանությանը և էրոզիայի նվազեցմանը
Կենսաբազմազանության պահպանում	Տնկվում են տեղական ծառատեսակներ, ձևավորվում են նոր կենսամիջավայրեր
Անտառապատման միջոցառումների խթանում	Ծրագրով նախատեսվում է 27.94759 հա տարածքի անտառապատում
Կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմում	Ավելանում է ածխածնի կլանումը և բարելավվում է էկոհամակարգերի կայունությունը
Բնական ռեսուրսների կայուն կառավարում	Նախատեսված է 7 տարվա խնամք և մինչև 25 տարվա հետագա հսկողություն

6. Այլընտրանքային տարբերակների գնահատում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում դիտարկվել են նախատեսվող գործունեության իրականացման տարբեր այլընտրանքներ՝ նպատակ ունենալով ընտրել շրջակա միջավայրի, բնական ռեսուրսների և սոցիալ-տնտեսական պայմանների տեսանկյունից առավել նպատակահարմար տարբերակը: Այլընտրանքների գնահատումն իրականացվել է՝ հաշվի առնելով ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները:

7.1. Զրոյական տարբերակ (նախատեսվող գործունեության չիրականացում)

Զրոյական տարբերակը ենթադրում է նախատեսվող անտառապատման ծրագրի չիրականացում և տարածքների պահպանում ներկայիս վիճակում:

Ծրագրի չիրականացման դեպքում չեն իրականացվի անտառապատման աշխատանքներ, չեն ստեղծվի նոր անտառային տնկարկներ, ինչպես նաև չեն իրականացվի հողերի բարելավման, էրոզիոն գործընթացների սահմանափակման և կենսաբազմազանության հարստացմանն ուղղված միջոցառումներ:

Տարածքները կշարունակեն օգտագործվել ներկայիս ձևով, իսկ դրանց էկոլոգիական վիճակի բարելավմանն ուղղված որևէ նպատակային միջոցառում չի իրականացվի: Արդյունքում չեն ձևավորվի նոր անտառային էկոհամակարգեր, չի ավելանա ածխածնի կլանման կարողությունը, չեն բարելավվի բնակության վայրերը բուսական և կենդանական աշխարհի բազմաթիվ տեսակների համար, ինչպես նաև չեն ուժեղանա տարածքների պաշտպանական և բնապահպանական գործառույթները:

Միաժամանակ, ծրագրի չիրականացման դեպքում չեն առաջանա նաև ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր կարճաժամկետ ազդեցությունները, ինչպիսիք են տեխնիկայի տեղաշարժից և աշխատանքների կազմակերպումից առաջացող ժամանակավոր աղմուկը, ճնշին քանակությամբ փոշու առաջացումը, վառելիքի օգտագործման հետևանքով արտանետումները և աշխատանքների ընթացքում ձևավորվող սահմանափակ ծավալի թափոնները: Սակայն նշված ազդեցությունները կրում են ժամանակավոր և կառավարելի բնույթ և նախատեսված բնապահպանական միջոցառումների կիրառման պայմաններում չեն հանգեցնի շրջակա միջավայրի վրա էական բացասական ազդեցությունների:

Վերոնշյալի հիման վրա գնահատվել է, որ զրոյական տարբերակը չի նպաստում ծրագրի բնապահպանական նպատակների իրականացմանը և չի ապահովում տարածքների էկոլոգիական վիճակի բարելավումը: Հետևաբար, բնապահպանական և սոցիալ-տնտեսական տեսանկյունից նախընտրելի է նախատեսվող գործունեության իրականացումը:


8. Գրականության ցանկ

1. **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»** ՀՀ օրենք, 2023 թվականի մայիսի 3-ի ՀՕ-150-Ն:
2. ՀՀ կառավարության **2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշում**՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացի կարգերը հաստատելու մասին:
3. ՀՀ շրջակա միջավայրի նախարարի **2024 թվականի հոկտեմբերի 29-ի N 438-Ն հրաման**՝ ՇՄԱԳ հաշվետվությունների բովանդակության և կառուցվածքի պահանջների հաստատման մասին:
4. ՀՀ բնապահպանության նախարարի **2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրաման**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին:
5. ՀՀ բնապահպանության նախարարի **2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրաման**՝ թափոնների վտանգավորության դասակարգման մասին:
6. ՀՀ կառավարության **2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշում**՝ շրջակա միջավայրի մշտադիտարկման կարգի վերաբերյալ (մշտադիտարկման պլանի մշակման համար):
7. **Հայաստանի բույսերի Կարմիր գիրք**: Երևան, 2010 թ.
8. **Հայաստանի կենդանիների Կարմիր գիրք**: Երևան, 2010 թ.
9. **Флора Армении** / Под ред. А. Л. Тахтаджяна. — Ереван: Издательство АН Армянской ССР.
10. **Животный мир Армении** / Под ред. М. С. Адамяна.
11. **Почвы Армянской ССР** / Ред. Р. А. Էդիլյան, Գ. Պ. Պետրոսյան, Ն. Ն. Ռոզով. — Երևան, «Айастан», 1976.
12. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության **«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ**-ի կլիմայական և օդերևութաբանական տվյալներ:
13. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության **«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ**-ի տվյալներ:
14. **ՀՀ Կադաստրի կոմիտեի** քարտեզագրական և կադաստրային տվյալներ:
15. **Google Earth Pro** ծրագրային ապահովման քարտեզագրական նյութեր և արբանյակային պատկերներ:
16. **OpenStreetMap** քարտեզագրական տվյալներ (տեղադրության և ենթակառուցվածքների ճշգրտման նպատակով):

17. **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի տվյալներ։
18. **ԷՅԹԻՓԻ բարեգործական հիմնադրամ** կողմից տրամադրված նախագծային, քարտեզագրական և տեխնիկական նյութեր։
19. Անտառապատման ծրագրի իրականացման նպատակով իրականացված դաշտային ուսումնասիրությունների արդյունքներ (2026 թ.)։
20. Նախագծային կազմակերպության կողմից կատարված հաշվարկներ, վերլուծություններ և դաշտային դիտարկումներ։
21. IUCN Red List of Threatened Species.
22. FAO. Guidelines for Forest Restoration and Afforestation.
23. Convention on Biological Diversity (CBD).
24. UN Framework Convention on Climate Change (UNFCCC).

9. Հավելվածներ

Հավելված 1: Հողամասի վկայական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 26 օգոստոսի 2026 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Գավառ, քաղաք Գավառ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության 13 հուլիսի 2006 թվականի N 1176-Ն որոշում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 46 հոդված, Բաժանման դիմում 21/08/2026թ.


4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-001-1183-0022
Մակերեսի չափը (հա)՝ 27.94759
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արոտավայր, Վարելահող
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 26082026-05-0055, գաղտնաբառ՝ GMVGAHEWGEBE

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2



5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

27.94759 հա հողամասից 9.83541 հա արոտավայր, 18.11218 հա վարելահող

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 26082026-05-0055, գաղտնաբառ՝ GMVGAHEWGEBE

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե


Էջ 2/2

Հավելված 2. Գավառ տեղամասի կոորդինատները՝ ARM WGS-84 համակարգով

1	8509056.004	4468673.807
2	8509026.577	4468716.724
3	8509014.309	4468739.199
4	8508995.543	4468754.848
5	8508963.152	4468768.722
6	8508926.671	4468811.860
7	8508920.509	4468825.493
8	8508914.096	4468834.357
9	8508902.757	4468840.369
10	8508890.968	4468847.552
11	8508880.008	4468857.581
12	8508863.603	4468869.947
13	8508841.759	4468880.884
14	8508786.139	4468902.556
15	8508753.488	4468921.159
16	8508706.373	4468970.605
17	8508661.830	4469012.270
18	8508537.030	4469086.943
19	8508481.809	4469117.342
20	8508437.192	4469168.800
21	8508409.936	4469215.517
22	8508400.479	4469235.070
23	8508391.078	4469254.646
24	8508381.192	4469281.128
25	8508371.305	4469307.609
26	8508360.197	4469353.564
27	8508367.751	4469356.340
28	8508375.305	4469359.115
29	8508375.332	4469359.052
30	8508381.192	4469345.461
31	8508387.079	4469331.808
32	8508387.144	4469331.821
33	8508403.075	4469335.138
34	8508419.071	4469338.468
35	8508416.628	4469350.568
36	8508414.184	4469362.667
37	8508421.071	4469365.553
38	8508421.132	4469365.500
39	8508448.176	4469342.464
40	8508475.280	4469319.376
41	8508491.054	4469330.476

42	8508506.828	4469341.576
43	8508530.996	4469320.792
44	8508528.577	4469317.082
45	8508496.446	4469267.797
46	8508579.474	4469218.507
47	8508579.578	4469218.445
48	8508684.369	4469156.236
49	8508732.829	4469127.467
50	8508782.393	4469201.254
51	8508839.141	4469285.738
52	8508956.393	4469215.907
53	8508990.207	4469280.543
54	8508990.213	4469280.551
55	8508990.217	4469280.562
56	8508990.264	4469280.533
57	8509089.446	4469217.555
58	8509081.741	4469161.452
59	8509040.535	4469024.845
60	8509065.135	4469017.425
61	8509192.869	4468978.895
62	8509216.549	4469041.477
63	8509217.683	4469044.475
64	8509233.604	4469086.549
65	8509244.130	4469114.372
66	8509287.080	4469196.031
67	8509330.262	4469174.411
68	8509375.558	4469210.572
69	8509377.135	4469177.529
70	8509371.029	4469145.554
71	8509347.280	4469092.049
72	8509329.816	4469080.730
73	8509334.842	4469054.542
74	8509286.400	4468905.730
75	8509296.943	4468870.763
76	8509301.293	4468829.603
77	8509292.494	4468792.595
78	8509267.712	4468771.936
79	8509258.860	4468768.813
80	8509218.408	4468760.060
81	8509176.803	4468734.530
82	8509139.788	4468707.422
83	8509101.576	4468685.411

Հավելված 3: Պետական միասնական գրանցման քաղվածք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ած 2026-01-16

«ԱՐՄԵՆԻԱ ԹՐԻ ՓՐՈՋԵՔԹ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀՄԴ)

Գրանցման համար	222.160.00220
Հիմնադրման տարի	2003
Գրանցման ամսաթիվ	2003-11-17
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	39102567
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	02554563
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	43160220
Էլ. փոստ	nune@armeniatree.org
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ / 57/5 ՇԵՆԳԱՎԻԹ 0026 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	-

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	ԱՐԱ-ՓԱՌԻԼ ԲԱՐՍԱՄ
Անձնագրային տվյալներ	AA12480 2025-10-30
Հասցե	ՄՈՍԿՈՎՅԱՆ Փ. / Շ / 9 / 3 ԲՆ. ԿԵՆՏՐՈՆ 0002 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ԹԱՐՄԱՑՎԱԾ է՝ 2026-01-16
«ԱՐՄԵՆԻԱ ԹԻՓ ՓՐՈՋԵՔԹ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՀՄԴ

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2003-11-17	Անվանման փոփոխություն Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2004-07-30	Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)
2004-10-14	Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2005-01-25	Անվանման փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)
2005-03-16	Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2012-01-24	Կանոնադրության թվայնացում
2012-04-13	Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2015-11-20	Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն
2017-03-01	Անվանման փոփոխություն Իրավաբանական հասցեի փոփոխություն Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)
2019-11-14	Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)
2021-07-07	Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն
2023-04-03	Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում
2024-01-30	Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում
2025-01-09	Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում
2025-07-24	Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում
2026-01-07	Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի
2026-01-16	Պաշտոնական կայքի և/կամ էլ.փոստի մասին տվյալների փոփոխություն Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն

Քաղվածքը տրամադրող՝ _____ ՕԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆ

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 16-01-2026

Հավելված 4: Տեղեկանք պատմաշկութային օբյեկտների մասին:

16.10.2026թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ Գավառ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 05-001-1183-0022 կադաստրային ծածկագրով /որից՝ 9,83541 հա արոտավայր, 18,11218 հա վարելահող/ հողատարածքում, որը նախատեսված է անտառահիմնման համար պատմամշակութային հուշարձաններ և հողատարածքներ առկա չեն: Նշված հողատարածքը մշտապես օգտագործվել է որպես արոտավայր:

Տրվում է ներկայացնելու ըստ պահանջի

Կատ. Գյուղատնտեսության և բնապահպանության

Բաժնի պետ Ա.Դուրշուդյան

Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ.Բոշյան

Հավելված 5: Բուսաբանական հաշվետվություն:

Գավառի անտառապատման տեղամասի բուսաբանական ուսումնասիրության հաշվետվություն

Ուսումնասիրության նպատակը

«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող անտառապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման լրամշակված հաշվետվության պատրաստման շրջանակներում 2026 թվականի մայիսի 12-ին և հուլիսի 15-ին իրականացվել են դաշտային բուսաբանական ուսումնասիրություններ՝ բուսաբան և կենսաբան մասնագետների մասնակցությամբ:

Ուսումնասիրությունների նպատակն էր գնահատել տեղամասի բուսածածկույթի ընդհանուր վիճակը, բնութագրել բուսական համակեցությունների կազմն ու կառուցվածքը և պարզել Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում ընդգրկված տեսակների հնարավոր առկայությունը:

Տարածաշրջանի բուսականության ընդհանուր բնութագիրը

Գեղարքունիքի մարզի բուսական աշխարհը բնութագրվում է տեսակային բարձր բազմազանությամբ, ինչը պայմանավորված է տարածքի լեռնային ռելիեֆով, բարձրությունների զգալի տատանումներով, կլիմայական պայմանների տարածական տարբերություններով և բնական կենսամիջավայրերի բազմազանությամբ:

Մարզի բուսական ծածկույթում գերակշռում են լեռնատափաստանային, լեռնամարգագետնային, ենթալպյան և ալպյան բուսական համակեցությունները, որոնք լայն տարածում ունեն Գեղամա, Վարդենիսի, Սևանի և հարակից լեռնաշղթաների լանջերին: Բարձրադիր գոտիներում ձևավորված բնական արոտավայրերն ու խոտհարքները կարևոր դեր ունեն տարածաշրջանի կենսաբազմազանության պահպանության, հողածածկույթի կայունության և էկոհամակարգային գործառույթների ապահովման տեսանկյունից:

Սևանա լճի ավազանում առանձնացվում են լեռնատափաստանային, լեռնանտառային, լեռնամարգագետնային, ենթալպյան և ալպյան բուսականության բարձրության գոտիներ: Լեռնանտառային համակեցությունները զբաղեցնում են համեմատաբար սահմանափակ տարածքներ՝ հիմնականում Արեգունու, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների առանձին հատվածներում, մինչդեռ լեռնատափաստանային և բարձրալեռնային մարգագետնային էկոհամակարգերը տարածված են առավել ընդարձակ մակերեսներով:

Սևանի ավազանը Հարավային Կովկասի կարևոր ֆլորիստիկական շրջաններից է, որտեղ գրանցված են շուրջ 1600 անոթավոր բուսատեսակներ, այդ թվում՝ էնդեմիկ, հազվագյուտ և պահպանության հատուկ կարգավիճակ ունեցող տեսակներ: Բնական բուսական համակեցությունների հետ մեկտեղ տարածքի բուսածածկույթի կառուցվածքում որոշակի դեր ունեն նաև արհեստական անտառտնկարկները, որոնցում հանդիպում են սոճի, բարդի, ուռենի, ակացիա, հացենի, թեղի և այլ ծառատեսակներ:

Գեղարքունիքի մարզում է գտնվում «Սևան» ազգային պարկը, որի տարածքում պահպանվում են բնական և կիսաբնական էկոհամակարգեր, ինչպես նաև հազվագյուտ, էնդեմիկ և պահպանվող բուսատեսակներ: ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում ընդգրկված մի շարք տեսակներ տարածված են նաև Գեղարքունիքի մարզում: Դրանց առկայությունը առանձին տեղամասում պայմանավորված է համապատասխան կենսամիջավայրերի առկայությամբ և ենթակա է գնահատման տեղամասային դաշտային ուսումնասիրությունների հիման վրա:

1

Դաշտային ուսումնասիրության եղանակը

Դաշտային ուսումնասիրություններն իրականացվել են վեգետացիոն շրջանի երկու ժամանակահատվածներում՝ գարնանը և ամռանը: Սա հնարավորություն է տվել դիտարկել բուսականության սեզոնային զարգացման տարբեր փուլերը և ընդլայնել բույսերի հայտնաբերման հնարավորությունները:

Երկու տեղազննումների ընթացքում կիրառվել է ակնադիտական ուսումնասիրության եղանակը. բույսերը որոշվել են արտաքին կառուցվածքային հատկանիշներով, գնահատվել են բուսականության տարածական բաշխվածությունը և աճելավայրերի ընդհանուր բնութագրերը:



Տեղամասի բուսականությունը և արձանագրված բույսերը

Դաշտային դիտարկումների համաձայն՝ ուսումնասիրված տեղամասին բնորոշ է լեռնատափաստանային, տեղ-տեղ՝ տափաստանացած մարգագետնային բուսականությունը: Մակերևույթը հիմնականում հարթ կամ մեղմաթեք է, առանձին հատվածներում՝ քարքարոտ: Դիտարկվել են ցածր և միջին բարձրության խոտաբուսային համակեցություններ, ցրված քարային ելքեր և տեղային, թույլ արտահայտված էրոզիոն երևույթներ:

Բուսածածկույթի տարածական բաշխվածությունը համեմատաբար համաչափ է, սակայն առանձին հատվածներում դիտվում են ծածկույթի խտության տարբերություններ: Համակեցությունների կազմում գերակշռում են բազմամյա և միամյա խոտաբույսերը, այդ թվում՝ հացազգիների (Poaceae), խորդենազգիների (Geraniaceae), խաչածաղկազգիների (Brassicaceae), շրթնածաղկավորների (Lamiaceae), աստղածաղկավորների (Asteraceae) և վարդազգիների (Rosaceae) ընտանիքների ներկայացուցիչները:

Մայիսյան և հուլիսյան ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են հետևյալ բուսական տաքսոնները՝ Myosotis sp., Erysimum sp., Linaria genistifolia, Salvia verticillata, Cirsium sp. և Potentilla sp.: Ցանկում երկու բույս ներկայացված է տեսակի, չորսը՝ ցեղի մակարդակով:

Արձանագրված բույսերը բնորոշ են Հայաստանի լեռնատափաստանային և մարգագետնատափաստանային համակեցություններին: Դրանց առկայությունը համահունչ է ուսումնասիրված տեղամասի ընդհանուր էկոլոգիական և բուսաաշխարհագրական առանձնահատկություններին:

Ստորև ներկայացված լուսանկարներում պատկերված են ուսումնասիրվող տարածքի բուսածածկույթում հանդիպող առավել տարածված բուսական ընտանիքների և ցեղերի առանձին ներկայացուցիչներ:





Եղեսպակ — Salvia sp. (Lamiaceae)



Մատնունի — Potentilla sp. (Rosaceae)



Առվույտ — Medicago sp. (Fabaceae)



Անմոռուկ- Myosotis sp.

3

Պահպանվող տեսակների վերաբերյալ դիտարկումները

2026 թվականի մայիսի 12-ին և հուլիսի 15-ին իրականացված դաշտային ուսումնասիրությունների ընթացքում նախատեսվող անտառապատման տեղամասում ՀՀ բույսերի Կարմիր գրքում ընդգրկված տեսակներ չեն արձանագրվել:

Այս արդյունքը բնութագրում է նշված երկու ժամանակահատվածներում դիտարկված բուսականությունը: Առանձին տեսակների հայտնաբերումը կախված է դրանց սեզոնային զարգացման և ֆենոլոգիական առանձնահատկություններից: Հետագա մշտադիտարկումները հնարավորություն կտան լրացուցիչ ճշտել տեղամասի տեսակային կազմը:

Բուսականության պահպանության միջոցառումները

Հաշվի առնելով տեղամասի բնական բուսականության առանձնահատկությունները՝ անտառապատման ընթացքում նախատեսվում է հնարավորինս սահմանափակել հողաբուսական ծածկույթի խախտումը և պահպանել աշխատանքների համար չնախատեսված հատվածների բնական բուսականությունը:

Անտառապատումից առաջ և հետագա մշտադիտարկումների ընթացքում անհրաժեշտության դեպքում կիրականացվեն լրացուցիչ բուսաբանական դիտարկումներ: Արժեքավոր և հատուկ պահպանության կարիք ունեցող տեսակների հայտնաբերման դեպքում կգնահատվեն դրանց աճելավայրերը և կսահմանվեն համապատասխան պահպանական միջոցառումներ:

Եզրակացություն

2026 թվականի գարնանային և ամառային ուսումնասիրությունների արդյունքներով՝ Գավառի նախատեսվող անտառապատման տեղամասում նկարագրվել է լեռնատափաստանային, տեղ-տեղ՝ տափաստանացած մարգագետնային բուսականություն: Նշված այցելությունների ընթացքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում ընդգրկված տեսակներ չեն արձանագրվել:

Նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են հողի նախապատրաստման և տնկման ընթացքում բուսածածկույթի տեղային խախտման, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ բուսական համակեցությունների կառուցվածքի հնարավոր փոփոխության հետ: Այդ ազդեցությունները ենթակա են վերահսկման՝ նախագծով նախատեսված բնապահպանական և մշտադիտարկման միջոցառումների իրականացման միջոցով:

Սուսաննա Անտոնյան
Կենսաբան, էկոլոգ,
կենսառեսուրսների կառավարման մասնագետ

